




241  
n-20



Մ Ա Տ Ե Ն Ա Դ Ա Ր Ա Ն

ՄԱՆԿԱՆՑ



10

ՀՈՒԴՈՎԻԿՈՍ

THE UNIVERSITY OF

CHICAGO  
LIBRARY



100-450-101

1900

CHICAGO

1900

# ՀՈՒԴՈՎԻԿՈՍ

Կ Ա Ս

Կ Ո Ր Ս Ո Ւ Ա Ծ Տ Ղ Ա Յ



Վ Ե Ն Ե Տ Ի Կ

Ս Ո Ւ Բ Բ Ղ Ա Զ Ա Բ

—  
1835



UNRECORDED

RECORDED

58804-wb



586-2007





ԼՈՒՂՈՒԿՆՈՍ



# Լ ՈՒԴ Ո Վ Ի Կ Ո Ս

## ԳԼՈՒԽ Ա.

Կորսուած տղայ մը .

**Լ ՈՐԵՆՑԻՈՍ** | Ինտէր աղքատ վարձ  
ուորը, առաւօտանց անտառը դացեր՝ ու  
բոլոր օրը աշխատած էր փայտ ժողվելու .  
երբոր իրիկունս եղաւ, կացինը ուսը ճամ-  
բայ եղաւ տուն դառնալու : Ա՛էյ մ'ալ  
յանկարծ անտառին մէջէն տղու մը բալու  
ձայն լսեց : — Ա՛հ, ըսաւ, գթասիրտ  
վարձուորը, անշուշտ կորսուած տղայ մը  
սխախ ըլլայ . երթամ գտնեմ, ու շխտակ  
ճամբունս վրայ հանեմ :

Շատ աշխատութեամբ թուփերուն մէջ  
մտաւ, և մէկ մեծ կաղնիի ծառի մը քով

Համնելով որ փշաղեց ծառերով պատած էր, տեսաւ մեց եօթը տարուան խեղճուկ աղայ մը՝ որ ծունկ դրեր ու ջերմեռանդու թեամբ սև սև գեղեցիկ աչուրները երկինք կը մերցընէր, և արցունքները մարգարտի պէս երեսէն վար կը թափէին. շատ կոկիկ հագուած էր, բաճկոնը ազնիւ չուխայէ շինած, մէկալ զգեստն ալ ձիւնի պէս ճերմակ. երկան ու սև մազերը ուսերէն վար կը կախուէին, միզն ալ ազնիւ կերպասէ փնոց մը սրլընէր էր: Տղան սկսաւ գաղղիւնրէն կանչել. Ա՛հ Աստուած իմ, Աստուած իմ, ողորմէ ինձի:

Վորենցիտս չէր հասկընար գաղղիւնրէն, բայց անոր զուրցուածքին կերպը սիրտը շարժեց: Տղան զինքը տեսնելուն պէս դիմացը վաղեց, և առանց վախնալու անոր ձեռքը բռնելով գերմաններէն սխալ խօսելով կ'աղաչէր, որ զինքը մօրը տանի: Վորենցիտս հարցուց թէ ո՞ւր է մայրդ, և դու ի՞նչպէս կորսուեցար: Տղան ալ սկսաւ կրցածին շտի իր միտքը բացատրել, թէ ես Գաղղիայ ծնած եմ. և անունս Վուդովիկոս է, իմ ծնողքս սրանդխտութեամբ եկեր էին Գերմանիա՝ Գաղղիոց խռովու-

Թիւն սկսած ատենները . իմ հայրս փախչող իշխաններէն մէկուն հետն է . ես և իմ մայրս Վրեմբերի ըսուած տեղը գացինք , բայց երբոր դաղղիացոց զօրքը հոն մօտեցան՝ սէտք եղաւ որ նորէն փախչինք , և ան օրը աս անտառին մօտ գեղ մը հասանք : Հոն երբոր մեզի համար կերակուր կը պատրաստուէր պանդոկին մէջը , ես ուզեցի քիչ մը վազվզել . մայրս հրաման տուաւ , բայց պատուիրեց որ պարտեզէն դուրս չելեմ . ես ալ ուրախութեամբ աս դիւ ան դին կը վազէի կը ցածկէի . մէյմալ աղուոր Թիթեոնիկ մը տեսայ , որուն նմանը կենացս մէջ չէի տեսած՝ գեղեցիկ գուներով զարդարուած , մէկէն վազեցի վրան , անիկայ Թուա գնաց դաշտը , ես ալ մօրս արգելքը մոռնալով՝ վազեցի ետեւէն : Հոն՝ մօտի անտառին մէջէն կը կուի ձայն մը ըսեցի՝ իմ առջի խաղալիքներուս մէջը պզտիկ սրինգիս ձայնին նման , անոր համար սկսայ ծափ զարնել ուրախութեամբ ու Թիթեոնիկը մոռցած՝ սկսայ վազել դէպ ի ան կողմը ուսկից ձայնը կու գար . իսկ ան Թոչունը Թուփէ Թուփ Թրուչրտեղով չէր երևնար , ու շարունակ կ'եր-

գէր՝ ուստի ես ուզելով աչքովս տեսնալ  
զինքք մտայ անտառը : Այտքը յանկարծ  
միտքս եկաւ որ մայրս կ'ըստասէ ինձի ,  
սկսայ բոլոր ուժովս վազել . բայց չզիտ-  
նալով թէ ո՞ր կողմը պէտք է երթալ , գեղ  
դառնալու տեղ՝ պզտիկ ճամբաներու մէջ  
մոլորեցայ , և աւելի հեռացայ անկէ , ին-  
չուան աս խիտ թուփերուն մէջ ընկայ .  
ուսկից ալ շկրցայ դուրս ելել : Յոգնու-  
թենէն ուժս թափած , անօթութենէն նե-  
ղացած , ծառի մը տակ պառկեցայ . ետքը  
Աստուծոյ աղօթք բրի որ զիս ազատէ :

Մեծ յանցանք բրեր ես , իմ սիրելի  
Վուդուիկս , ըսաւ Վորենցիոս , որ ան  
թիթեռնիկին գոյներուն և կկուին երգին  
համար՝ մօրդ հրամանը մոռցար . Վուդու-  
իկոս սրկունքները կախեց , սկսաւ լալ :

Չէ՛ չէ՛ , մի լար , ըսաւ , Վորենցիոսը ,  
կարծեմ թէ Աստուած քու զղջումդ տես-  
նելով քեզի ողորմեցաւ , և կ'ուզէ քեզի  
օգնել . հիմա պէտք է որ շնորհակալ ըլ-  
լաս իրեն , և խոստանաս ասկէ վերջը  
միշտ խելօք ըլլալու : Ահա տեսար , ո՞վ  
որ կ'ուզէ իր կամքին հետեւիլ ու միայն  
խելքին փչածը ընել՝ ինչպէս վտանգնե-

բու մէջ կ'իյնայ : Հէ՛, թիթեռնիկէն  
ուրիշ սրչափ աղուոր բաներ կան՝ որոնց  
եսեւէն պէտք չէ երթաւ . ու ամէն կկուի  
ձայնին մտիկ պէտք չէ ընես : Աստուած  
ուզելով ազատել զքեզ աս ամէն վտանգնե-  
րէն , ու իր շնորհքը տալ քեզի որ աշխար-  
հիս մէջ երջանկութեամբ կեանքդ անցը-  
նես , ահա աս փորձանքը տուաւ քեզի  
խրատի համար :

Ասանկ ըսելով Վորենցիոս , մէկ նեղ  
ճամբէ մը դուրս հանեց Վուզովիկոսը :



## Գ Լ ՈՒԽ Բ

### Գիշեր մը .

ԼՐԹԱԼՈՒ ատեննին Վ որենցիոս հարցուց տղուն թէ՛ ձեր իջած գեղին անունը ինչ էր : Վ ուղղովիկոս անունը չէր գիտէր . բայց կրցածին չափ նկարագրելով ան տեղը , ըսաւ թէ՛ մէկ լեռան մը տակ էր ան գեղը , և ան լեռանը վրայ մէկ մեծ անտառ մը և աղուոր բերդ մը կար :

Իմացայ , ըսաւ Վ որենցիոս , Վ ալտէն պէրին է ան , հիմայ անկէջ երկու փարսախ հեռու ենք : Այսօր դու շատ հոգնած ըլլալով չես կրնար այնչափ ճամբայ ընել , ոչ կերակուր ես կերեր և ոչ հանգչեր ես , հիմա եկու իմ տունս երթանք՝ որ հոս մօտ է , ու քիչ մը բան ուտես . վերջը ձի կը հեծնանք , և շուտով կ'երթանք մէկ տեղ Վ ալտէնպէրկ . մէկ ժամուան մէջ նորէն կը գտնաս քու մայրդ :

Այս խօսքը երբ լսեց Վ ուղղովիկոս՝ ու



բախութեամբ և առանց վախի սկսաւ Վորենցիոսի ետեւէն երթալ . շուտ մը հասան տունը , որ զուարճալի դաշտի մէջ լիճի մը քով շինած էր :

Յոհաննա , Վորենցիոսի կնիկը , իր հինգ տղաքներովը , պզտիկն ալ գիրկը առած՝ էրկանը դիմացը ելաւ , հեռուէն կանչելով . իմացա՛ր իմացա՛ր . գաղղիացի զինուորները այսօր Վալտէնալէրկ հասեր են , և գունդ մը հետեակ զօրքերու բոլոր անտառին տիրեր են :

Վորենցիոս աս խօսքը երբ լսեց . ապշած մնաց . Յոհաննան ալ զարմացաւ տեսնելով պզտի գաղղիացի տղեկը . սկսաւ լաւ մը վրան նայիլ . տղաքն ալ մօտեցան անոր , և Աղիսաբեթը ըսաւ . — Աս ինչուան հիմայ կը կարծէի որ գաղղիացիները ահաւոր մարդիկ են , բայց թէ որ ամէնքը աս տղուն պէս շնորհալի են , ալ պիտի չվախնամ անոնցմէ :

Վորենցիոս սրատմեց կնկանը տղուն ըսածները , անոր ալ սիրտը շարժեցաւ . Մեղք , մեղք , կանչեց , խեղճուկը անօթի պիտի ըլլայ , երթամ կտոր մը ուտելու բան տամ : Տղաքը ծիծաղելով սիրտ կու

տային՝ Վուդուվիկոսին ծուռումուռ գերմաններէն խօսած ատենը :

Շուտ մը գնացին, իրիկուան կերակուրի նստեցան. բերին տաք տաք կարմրոցու ցած գետնախնձորը, Վուդուվիկոս քանի մը հատ առաւ՝ իր սնակին քովը դրաւ, ու կ'ըստպասէր. վասն զի ինքը գետնախնձորը միշտ մտի հետ կերած էր. տեսաւ որ դրանք քով հաւերը կը սլաղալտէին, ասոնք սէտք է խորվել, ըսաւ :

Պատասխան տուաւ Յուհաննա, Սիրելի Վուդուվիկ գիտես որ խորված ուտելը մեզի ծանր կը նստի. մենք աս հաւերը կը մեծ պըննեք՝ կը ծախենք, և առած ստակնիս աւելի հարկաւոր բաներու կը գործածենք :

Այսպէս ըսելով, քիչ մը կարագ բերաւ. Վուդուվիկոս իրեն գետնախնձորները անով կերաւ :

Ինձրիքէն վերջը, Վորենցիոս դարձաւ ըսաւ. — Տղաս, այսօր չեքն կրնար երթալ Վարտէնպէրկ, վասն զի հիւնց գաղղիալիք ան կողմերը բռնեք են, վտանգաւոր է գիշերանց երթալ հոն : Աւրեմն եկու համ



րիբէ ինչուան առաւօտ, վաղը նայինք Աստուած ինչ կը յաջողէ :

Վուգովիկոս կամայ ակամայ խօսքը մտիկ ըրաւ, թէպէտ շատ կը փափաքէր ժամ մը առաջ մայրը տեսնալու : Յոհաննաս անոր սլատրաստեց անկողնիկ մը, իրեն սլտի տղոց սենեկին մէջ . Վուգովիկոսն ալ պառկած չպառկած անուշ քուն մը քաշեց :

Յոհաննաս դարձաւ դնաց դրանը մէջը նստաւ էրկանը քով, ինչպէս որ սովորու թիւն ունէին, օրուան աշխատութենէն ետքը նտտիլ ու խօսիլ վաղուան համար, փառք տալով Աստուծոյ, որ ան օրն ալ զիրենք հոգաց :

— Ինձի կ'երեւայ, ըսաւ Յոհաննաս, որ վաղը դու մինակ երթաս Վալտէն պէրկ . վասն զի ես կարծեմ որ Վուգովիկոսի մայրը իրեն հայրենակիցներուն մօտե նալը ըսելով՝ փախած սլտի ըլլայ, և մէկ տեղ մը ծածկուած, ինչուան որ իր տղան դանայ : Թէ որ տղան հետդ տանիս, կարելի է թէ գաղղիացոց աչքին զարնէ, ու մայրը մէյ մ'ալ չզբտնայ տղան :

— Իբրաւ կ'ըսես, պատասխանեց Վու-

ըննցիտ , վաղը ես մինակ կ'երթամ , և լուր մը կ'առնեմ :

— Այնպէս է այնպէս , կրկնեց Յոհաննան շատ լաւ կ'ընես որ առտուն կանուխ երթաս , վասն զի ես հիմայ կ'երևակայեմ որ խեղճ մայրը ինչ մըտամբտութի մէջ պիտի ըլլայ : Շիտակը ես ցաւէս կը մեռնէի թէ որ իմ որդւոցս մէկը կորսուէր օտար երկիր մը : Արուհետեւ վաղը Վալտէնպէրկ կ'երթաս , եկու հետդ քանի մը վառեակ ալ տար , ու ծախէ :

— Շատ լաւ , ըսաւ Վորենցիտը , անհաւերը ինձի հրամանագրի տեղ կ'ըլլան , որ սրահապանները թող տան երթալու ան սանդուկը ուր Վուդուիկոս կ'ըսէ թէ ինչեր էր մայրը : Հոն կը հարցընեմ կ'իմանամ , մօրը սրահուած տեղը :

— Քիչ մը դժար բան է ընելիքդ , ըսաւ Յոհաննան . բայց բարի դորձք մըն է , յուսամ որ Աստուած մեզի օգնէ . ապա թէ ոչ ես զքեզ չէի թողուր որ երթաս , բոլոր աշխարհքիս ոսկին ալ տային ինձի : Պարտքերնիս է աղէկ բան ընելը , Աստուած ալ միշտ բարերարին օգնական և առաջնորդ է :

## ԳԼՈՒԽ Գ.

Մօր մը սրտուհաշոշքը .

ԼԵՐԿՐՈՐԴ օրը արևը ծագած , շծագած , մեր սլատուական վարձուորը , զամբիւղը շարկեց հաւերն ալ մէկտեղ , սկսաւ դէպ ի Վ ալտէնպէրկ երթալ : Քանի մը ժամէն ետե նորէն դարձաւ , բերելով կնոջը սլարապ զամբիւղը և ծախածին ստակը :

Վ որենցիոս նստաւ , և ճակտին քրտինքը սրբելով , այսպէս խօսեցաւ .


— Վրէկ կանուխ հասեր են Վ ալտէնպէրկ , շատ կառքեր փախտտական մարդիկներով գաղղիացի զօրքերէն : Իսկ ցորեկուան մտ ուրիշ այնչափ մարդիկ ալ եկեր են՝ որ սլանդոկները սլարապ տեղ չէ մնացեր . հոն ուզեր են առ խեղճերը սլատառ մը բան ուտել , և ձիերը հանգչելէն ետե աւելի հեռու տեղ երթալ : Փախչողներուն մէջն էր Վ ուղովիկոսի մայրն ալ . շնորհքով ու

տղնուական խաթուն մը . և կերակուրի  
ատենը կը կանչէ զտղան կարծելով որ  
պարտէզը ըլլայ . բայց պատասխան չկայ :  
Վեր վար տղան փնտռելու ատեն , գունդ  
մը աւստրիացուց հեծեալներ կը հասնին  
ու կ'իմացնեն որ գաղղիացիները ետևնուն  
կու դան . աս խօսքերուն վրայ հրացաններ  
բու ձայն կը լսուին : Մէնուս սիրտը կը  
փրթի . քուածները սեղանէն կ'եղան , կը  
վազեն ձիերը կապելու որ փախչին . խեղճ  
մայրը երկու կողմէն մեծ նեղութեանց մէջ  
կ'իյնայ ու մեռելի գոյն կը դառնայ , մէյ  
մը ասդիս կը վազէ մէյ մը անդին , մազերը  
ցրուած , լալով ու ձեռուրները շարժելով ,  
որոնց որ կը պատահի կ'աղաչէ կ'երդուրն  
յնէ որ օգնեն իր որդին գտնալու : Բայց  
հրացանին ձայները երթալով կը մօտե-  
նային , և խեղճ մօրը ընկերները կ'ստիպեն  
շուտով երթալու որ վտանգի մէջ չիյնան ,  
ու նորէն գերի դառնան Վաղղիա : Իսկ  
ան կը կանչէր . Ալ լաւ է մեռնիլ քան  
թէ տղա հոս թողուլ :

Ըն ատենը ծեր մը ասոր կը հաւտայր-  
նէ թէ տղադ իրեն հասակակիցներուն հետ  
միատեղ կառքի մը մէջ գրուեցաւ շիտթու .

Թիան առջի նշան տրուած ատենը : Մայրը  
չհաւատար կը վազէ պանդոկը , հարցնելու  
թէ արդեօք իրա՞ն է , անոնք ալ այնպէս է  
կ'ըսեն . կամ լաւ չիմանալով ըսածը , կամ  
ան ծերուն խրատովը զինքը ազատելու հա-  
մար : Մայրը մարմնկաճ ուղելով չուզե-  
լով կառքը կը մանայ , և անոնք հազն թէ  
կ'երթան , գաղղիացիք կը մանան գեղը , և  
կը նստին քուածներուն թողուցած սեղա-  
նին : Ափսոս խեղճերուն , ըսաւ Յոհան-  
նա . բայց իմացա՞ր խաթունին ո՞վ ըլլալը .  
անունը հարցուցիր : — Տուվալ խաթուն  
կ'ըսուի եղեր . ու կ'երևայ թէ ատենօք հա-  
րուստ եղած է , բայց հիմակ կարօտու-  
թեան մէջ էր . և ինչպէս ըսին զգետը  
պարզ՝ առանց ոսկիի և բարակ զարդերու ,  
նոյնպէս կառքն ալ , անտուկն ալ պզտիկ .  
իրեն ու տղուն և ան ծեր քուածներուն  
համար սրասրատուած կերակուրն ալ  
շատ սակաւապետ : Անոր համար պան-  
դոկապետին կինը որ գաղղիներէն գիտէ ,  
շատ գովեց աս կնկանը համեստութիւնը և  
անուշ կերպը : — Անեղճ մայր , կանչեց  
Յոհաննան լալով , ի՞նչ կսկիծ պիտի ու-  
նենայ երբոր որդին չգանայ կառքին մէջ :

586-2007



Թշնամի գունդերը չեն թողուր, իրեն ետ  
դառնալ, ուրիշ տեղէ ալ չկրնար իմա-  
նալ թէ ի՞նչ պատահեր է օտար ժողո-  
վողեան մէջ կորսուած տղուն. կը վախ-  
նայ որ շատ ատենէ ետքը և գուցէ ոչ  
երբէք գտնայ զանիկայ : Անանկ սիրալիր  
մօր մը ասկէց աւելի մեծ ցաւ կրնայ ըլ-  
լալ :

Աս ալ շատ կը ցաւիմ՝ վրան. ըսաւ  
Լորենցիոսը, բայց ո՞ւր է տղան, դեռ չար-  
թընցաւ, չեղաւ :

— Վայ ինձի, պատասխան տուաւ  
Յոհաննան, խեղճ տղան հիմայ անուշ  
քուն կ'ըլլայ. բայց երբ արթննայ ի՞նչ  
տխուր լուր պիտի տանք իրեն :

Իրաւ է ըսածդ, բայց ի՞նչ ճար կրո-  
նանք ընել : — Աս ուրիշ բան չիմ գիտեր,  
բայց եթէ Աստուծակ մեզի տրուած սեպե-  
լով աս տղան, պահէնք ինչուան որ մայրը  
գտնուի : Արծեմ որ Աստուած կամաւ  
դքեզ ան կարնիին մօտ բերաւ՝ խեղճին ա-  
ղօթք ընելու ատենը :

— Ասածդ աղէկ է. բայց թէ որ  
պատերազմը երկայն քրչէ, և կամ, (Աս-  
տուած չի ցուցնէ) թէ որ մայրը մէյ



մ<sup>ա</sup> ալ ետ չդառնայ, թէ որ մեռնելու ըլլայ, մենք ի՛նչ պիտի ընենք :

— Ան ատենը մերիններուն հետ կը մեծ պընենք անիկայ . ուր որ վեց հոգի կը կերակրին, հոն կընայ եօթը հոգի ալ պահուիլ : Անտարակոյս Աստուած կ'օրհնէ ան քիչ շահերնիս, թէ որ մաս հանենք աս խեղճին ալ : Ան որ հինգ հացով հինգ հարիւր մարդ կերակրեց, նոյն տէրը հիմակ ալ կը հոգայ զմարդ :

— Իրաւունք ունիս, պատասխան տուաւ Աորենցիօսը, բայց թէ որ մեզմէ հարուստ մէկը դուրս ունենայ աս տղուն վրայ և ուզէ տունը առնել, կարծեմ աւելի լաւ կ'ըլլայ :

— Ատ՛ ան ատենը կ'ըլլայ երբոր իրենք ուզին, չէ նէ ես չեմ ուզեր հարուստներուն բերան ծոկ . վասն զի գթած սիրտը հարստութենէն չկախուի : Անոնք մեզմէ աւելի լաւ կընային նայիլ աս տղան, բայց այնչափ լաւ սրտով կը նային արդեօք : Աս իրաւընէ մօր պէս կը սիրեմ զանիկայ, և չեմ տարակուսիր որ դու ալ հօր պէս կը սիրես :

— Ինչո՞ւ չէ, կրկնեց պատուական

վարձուորը . և սկսաւ մտածել թէ իրենց  
քիչ շահալը կրնանր կերպրնել և հապցրնել  
Մուգովիկոսը . բայց ինչ ճամբայ որ բրո-  
նէր , միշտ պակաս բան մը կը գտնար :  
Ան առենը Յոհաննան , իր հաշիւները  
կտրեց , ըսելով . — Արբոր մէկը կ'ու-  
զէ բարկք մը ընել , սէտք չէ շատ մանր  
համրանքներ ընէ . այլ վտտահ ըլլայ Աս-  
տուծոյ առատութեանը վրայ : Մենք թէ  
մեր պղտիկ Ատորապոսը օտար աշխարհի  
մէջ գտնուէր առանց օգնութեան , չէ՞նք  
փափաքէր որ մարդասէր տանուտէր մը  
գութ ունենար , ու իր ծածկին տակ տեղ  
մը տար՝ իրեն որդւոյը հետ : Արեմն ան  
բանը որ մեզի կ'ուզենք , սէտք է որ մենք  
ալ ուրիշի ընենք :

Այսպէս ըսելով , արցունքները կը սրը-  
բէր :

Սորենցիտի սիրտը շարժած , ես սի-  
րով կը հոգայի , ըսաւ , աս տղան , բայց  
մեր աղքատութիւնը զիս տարակուսի մէջ  
ձգեց :

— Ահ , կրկնեց Յոհաննան , մենք կար-  
ծածներնէս աւելի հարուստ ենք , գուցէ ու-  
զէիր ինձի համար զգեստ գնել՝ աս օրերս



ըլլալու տօնախաճառէն . ահա ան տասիր  
Վուգովիկոսի համար գործածէ :

— Շատ լաւ և ազնիւ սիրտ ունիա ,  
քուրուկ , կանչեց Վորենցիոս զուարթ և  
բետով , ես ալ պիտի ջանամ որ իմ հազած  
զղեստոս տարիէն աւելի դիմանայ . աս կեր  
պով կրնանք ատեն մը Վուգովիկոսը հո  
գալ . մնացորդը Մտուած տեսնէ : Աս  
խօսքին վրայ Վուգովիկոս ալ ներս մտաւ ,  
և բարև տալով անոնց , աղաչեց վարձու  
րին որ ձին սխառաստէ՝ զինքը մօրը տա  
նելու համար :

— Մերելի Վուգովիկոս , պատասխա  
նեց Վորենցիոս , քու մայրդ երէկ կեր է  
Վալտէնուպէրիէն , և հիմայ խել մը հեռա  
ցած է : Օքեզ շտեմնալուն համար շատ  
տրտմեր է , բայց ստիպուեր է գեղէն ելա  
լու . վասն զի թշնամի զօրքերը վրայ հասեր  
են : Հիմայ անթիւ զօրքեր մօրդ ու քու  
մէջերնիդ կեցեր են , այնպէս որ անկարելի  
է հասնիլ անոր : Աս խօսքերը լսածին պէս  
Վուգովիկոս լայ մը փրցուց սաստիկ հեծ  
կրլտալով . Յոհաննան նստաւ աթոռին  
վրայ , գիրկը առաւ տղան , և արցունքն  
ըր սրբելով . — Մի լար սիրուն տղաս ,

մի լար, կ'ըսէր, համբերէ ու վերջապէս կը տեսնաս քու ազնիւ մայրդ, հիմըկու հիւ մայ ես քեզի մայրութիւն կ'ընեմ. զքեզ գտնողը հայրդ կ'ըլլայ, մեր տղաքներն ալ զքեզ եղբօր պէս կը սիրեն :

Վուգովիկոսը չէր ուզեր բանի մը մտիկ ընել, ու շարունակ կու լար. ան ատեն Յոհաննան ուրիշ փորձ մը ընելու համար, տարաւ զինքը դուրսի դաւիթը, ըսաւ էրկանը որ հանել տայ մտրուկը ախոռէն : — ՄՏ. ինչ գեղեցիկ ձիակ է, կանչեց Վուգովիկոսը. Վորենցիոս վերցուց վրան դրաւ տղան, ու պրտըտցուց դաւիթին մէջ, ինքը ձիուն չուանէն բռնած. Վուգովիկոս ուրախութենէն մոռցաւ ամէն բան, և արցունքներուն մէջէն ծիծաղելով կ'ըսէր :

Վաղը կամ մէկալ օր պիտի երթամ աս պղտի ձիով իմ մայրս գտնալու : — Մհա մխիթարուեցաւ գնաց, ըսաւ Յոհաննան. տղու մը սրտէն տրտմութիւնը փարատելու համար, պետք չէ շիտակ դէմը առնուլ, հասպա նոր բան մը մէջ ձգել : Մեզի ալ ասանկ կ'ըլլայ շատ անգամ. իմ վրաս երբոր տրտմալի մտածմունք մը կու գայ, մէ-

կէն երգ մը կ'երգեմ, կամ կը խօսիմ պզտի տղոյս հետ, կամ բան մը կը պատմեմ, կամ պարտէզը կը նայիմ ծաղկըններուն վրայ ու կը զուարճանամ: Քանի մը օր առաջ տրտմութիւն մը եկեր էր վրաս, մէյ մ'ալ Աղիսաբեթը ինձի փունջ մը ծաղիկ բերաւ որ ինքը ժողվեր էր, ամէն տրտմութիւնս փարատեցաւ: Իրաւ է որ աս անմեղ հնարքը ամէն անգամ չին կրնար նեղութիւններու դէմ կենալ, բայց ան ատենը աչքերս վերցնեմ, և կը մտածեմ Աստուծոյ այնչափ բարութիւնը՝ որ հոգ կը տանի մեր ամէնուս վրայ, և աս աշխարհքիս անցաւոր նեղութիւններէն վերջը յաւիտեանական ուրախութիւններ մեզի կը պատրաստէ: Այսպիսի խօսքերով, ես աւելի ուժովցայ. և իմ սիրտս քիչ ատենի մէջ գտաւ իր հանդարտութիւնը և ուրախութիւնը:



## ԳԼՈՒԽ Դ

Գեղիսն բնակիչքը .

ՇՈՒՏ մը գեղին մէջ խմացուեցաւ  
պղտիկ՝ գաղղխացւոյն հասնիլը, և ամէնուն  
հետաքրքրութիւն մը եկաւ զանիկայ տես-  
նալու . շատ կնկտիք և տղաք վազեցին  
Վորենցիոսի տունը : Գեղացիներուն սովո-  
րութիւնն էր ժողովուիլ ամէն իրիկուն ժա-  
մին զխմացի հրատարակին ուռիներուն  
տակ, և հոն նստած ծուխ քաշելով աս-  
դիէն անդիէն կը զրուցէին : Ան իրիկուն  
Վուգովիկոսն էր եղած ամէնուն խօսակ-  
ցութեան նիւթը : Վորենցիոս տեսնալով  
որ գեղին վերակացուն կու գայ, տղան  
ձեռքէն բռնեց, և անոր տանելով ը-  
սաւ .

— Գիտնաս որ աս տղան ես պիտի պա-  
հեմ իմ տունս մինչև որ իրեն մայրը գրա-  
նուի :

Գեղացիները շատ գովեցին Վորենցիոսը  
իր գթութեանը համար . բայց ոմանք ալ  
աս դատմունքը ըրին , որ ինքը արդէն  
մնուցանելու շատ տղաք ունենալով , այն-  
չափ խոհեմութիւն չէր նոր բեռ մըն ալ  
աւելցրնելը : Անոնց մէջէն Աղողիոս անու-  
նով մէկը որ ցածին մէկն էր և գաղտուկ  
թշնամի Վորենցիոսին , երաւ խօսք մը ձգեց  
թէ պէտք է շուտով գեղէն դուրս վերցն-  
տենք ատ սղտիկ գաղղիացին . — Գուք  
գիտէք , կ'ըսէր , որ ատ քշուածները Գաղ-  
ղնոյ թշնամի կը սեպուին . և հիմայ հասա-  
րակապետութեան զինուորներները հասնե-  
լով , եթէ տեսնան որ մենք անոնց տէր կը  
կենանք ու տեղ կու տանք . կըսկըսին թալ-  
ըն մեր տուները , և կըսկի տալ : Այլ Աս-  
տուած , հիմըկուրնէ աչքիս առջևը կու  
գայ ան սարսափելի թշուառութիւնը : Գե-  
ղն վերակացուն բարկութեամբ մը նայելով  
Վորենցիոսի վրայ , խօսքը ատանկ վերջա-  
ցուց . Աս կ'ուզեմ որ փախտտական տղան  
մինչև սահմանադրութիւն տարուի . Վորեն-  
ցիոսն ալ սպառժուի քշուածներուն կոնակ  
կենալուն , և ամէնուս վրայ թշուառու-  
թեան դռները բանալուն համար :

Գեղայիներէն շատր , աս խօսքերէն սարսափած , վերակացուն կարծեայր մի արանեցան . բայց ուրիշները աւելի խելացի դանուելով՝ սկսան յանդիմանել Աղողխօսը . և այսպէս մէջերնին մեծ կռիւ մը ելլաւ , ամէնքը սկսան կանչուռտել : Գեղին բնակիչները՝ երիտասարդ ծեր ու տղայ և կնկտիք , ամէնքը վազեցին տնանալու թէ ի՞նչ կայ , ի՞նչ է եղածը : Առիւր երթալով կը տաքնար . բայց գեղին երէցը վրայ հասնելով , սկսաւ ըսել .

— Միտիլի բարեկամներս , ինչո՞ւ պարապ տեղը կը նեղանաք . կասկածնիդ և վտանգը միայն գլխի տաքութենէ առաջ եկած բան մըն է . վտանգի մեր գեղին համար ամենևին վտանգ մը չկայ : Ան կտրիճ գաղղիացի պատերազմողները կարծէք թէ այնչափ ցած են , որ պատժեն զձեզ թրշուառ տղայ մը ազատելուդ համար , որ և ոչ քաղաքական պատերազմի մէջ մտնելու բաւական հասակ ունի . մանաւանդ թէ ահոնք զձեզ կը պաշտպանեն՝ տնանալով ձեր բրած բարիքը աս անօգնական տղուն վրայ : Այլ թէ որ ձեզմէ մէկը ասոր համար պրզտի փնասի մը հանդիպի , թող ինձի սեպուի



ան վնասը : Գաղղիացւոյ ըսէք թէ մեր  
Ժողովրդապետը խորհուրդ տուաւ ընդու-  
նելու աս տղան . ես կարող եմ զիս արդա-  
րացընել : Աս աս առածին կը հետեւիմ ,  
թէ “ ըրէ քու սլարտքդ , և բանէ մը մի  
վախնար , ” :

Այսպէս խօսելով երէցը՝ բռնեց Առ-  
դովիկոսի ձեռքէն , որ կու ըար՝ ասանկ  
սաստիկ վէճի մը պատճառ ըլլալուն հա-  
մար , և ան բազմութեան առջին հանե-  
լով ըսաւ , Տէրն մեր Յիսուս , որ մը ա-  
ռաքեալներուն առջևը կեցուց տղայ մը և  
ըսաւ իրենց . Ով որ ընդունի ասանկ տղայ  
մը , զիս կ'ընդունի . դարձեալ ասլսարեց ,  
չըլլայ թէ աս սղտիկներէն մէկը արհա-  
մարհէք , վասն զի չուզեր ձեր երկնաւոր  
հայրը որ անոնցմէ մէկը կորսուի : Այս-  
պէս հրամայեց մեր Փրկիչը . սիրելի բա-  
րեկամք հիմայ աս տղան ալ կորսուած էր ,  
բայց մեր բարի Աորենցիոսը զինքը գտաւ ,  
և տարաւ իր տունը : Դուք կ'ուզէք որ հի-  
մայ նորէն թողունք ասիկայ , և երթայ մու-  
րալով աշխարհքիս մէջ թափառական պտը-  
տի կորսուած գառնուկի մը պէս : Թէ որ  
սանկ ընելու ըլլաք , կը տրտմեցընէք Աս-

տուժոյ հրեշտակները , որոնց սիրելի են տղաքը՝ կը թշնամանէք զՄատուած՝ որ իրեն կը սեպէ տղոց եղած ամէն վնասը : Ըէ՛ չէ՛ , սիրելիք , ետ կեցէք ատ մտած մունքէն , ու ջանացէք արժանի ըլլալու երկնային օրհնութեանը . գու՛թ ցուցնելով աս խեղճուկին վրայ՝ ինչպէ՛ս բարի Վ որենցիտը . որպէ՛ս զի Մատուած ալ ձեր օրգւոցը վրայ գու՛թ ունենայ : Հիմայ որ մենք հոս կեցեր ենք աս ծառին տակը , ձեր տղոցմէ քանկները սլատերազմի մէջ պաշարած են ամէն վտանգներէ , ո՛վ գիտէ որ ան կտրիճներէն մէկը իր ընկերներէն հեռու՝ օտար երկրի մը մէջ վերաւորած երեսի վրայ թողած ըլլայ , և Մատուած ձեր աս գթութեանը նայելով անոր ալ բարեխար մարդ մը շնորհեր իրեն օգնելու համար :

Մագերէցը երբոր աս խօսքը կ'ըսէր , շատ մայր , քոյր , և նոր հարսեր սկսան լալ , ծերերն ալ չկրցան արցունքնին բրունել : Մէնքը խօսք տուին հետեւելու իրենց յարգելի հովուին խրատին . սկսան գովիլ Վ որենցիտը , և յանդիմանել չարասիրտ Աղոդիտը , որ սուտ վախերով վերենք



պղտորեց : Իսկ մեր պզտի Մուգովիկոսը  
շնորհակալութեամբ պագաւ երկնուն ձեռ-  
քը . ան ալ ապսպրեց տղուն որ երկրորդ  
օրը իր տունը գայ :



## ԳԼՈՒԽ Ե

### Ժողովրդապետ .

ԱՌԱՒՕՏԸ Վուգոմիկոս ելաւ պատ-  
րաստուեցաւ իր այցելութիւնը ընելու .  
մաքրեց լաւ մը իրեն կապուած զգեստը , և  
տղաչեց Յոհաննային որ քիչ մը մազերը  
շնակէ . Բորբառոտին յարդէ գլխարկը  
տուաւ ու գնաց : Աւագերէցին տունը  
մտնալուն սէս , բարև տուաւ , ու ըսաւ ,  
ասա կու գամ շնորհակալ ըլլալու հրա-  
մանքիդ , երէկ զիս պաշտպանելուդ հա-  
մար :

Աս ժողովրդապետն յարգելի ծեր մին  
էր , և տղոց վրայ շատ սէր ունէր , գաղ-  
ղիներէն լաւ կը հասկնար , և իր զբբարա-  
նին մէջ շատ գաղղիներէն զբբեր ունէր .  
բայց ամենևին վարժութիւն չէր բրած խօ-  
սելու , առիթ չունենալով վարժելու ան  
գեղին մէջ , ուր քառսուն տարիէ ի վեր  
կը բնակիր : Աւտի սկսաւ Վուգոմիկոսի

Հետ գերմաներէն խօսիլ . բարեւր առաւ , և  
հրաւիրեց բոլը նստելու : Առասկայութիւնը  
դիտելով աւագերէցը , խմայաւ որ Առդո-  
վիկոս աղէկ կրթութիւն մը առած է , և  
իրեն մայրը ազնիւ սիրտ մը և հարուստ  
միտք մը ունի եղբ : Ա երջը , — Այլնք  
կարգալ դիտես , ըսաւ :

— Աատասխանեց Առդովիկոս , գաղ-  
ղիներէն կարգալ դիտեմ , բայց գերմանե-  
րէն գեռ չէ :

Աւագերէցը դնաց գրգարանէն գաղ-  
ղիներէն դիւրք մը բերաւ Առդովիկոսի առ-  
ջեր գրաւ , ան ալ կարգաց մեծ դիւրու-  
թեամբ և լաւ հնչմամբ :

— Բեզի մի գաս տուաւ , հարցուց աւագ-  
երէցը , զարմայած :

— Իմ մայրս , սրատասխանեց Առդովի-  
կոս , ես չեմ ունեցած ուրիշ վարպետ :

Աւագերէցը հարցուց կրօնքի բաներու  
վրայ . Առդովիկոս սրատասխանեց ամէն  
հարցմունքին բարեպաշտութեան հոգեւով  
մը : Առսեցաւ նաև կոտորակ սրտով Աս-  
տուծոյ բարութեանը վրայ առ մարդիկ .  
ստեղծողին նախախնամութեանը վրայ , որ  
մեզի օգտակար կ'ընէ . քաշած նեղութիւն .

նիս . և ան վստահութեանը որ պիտի ունենանք առ Աստուած . դարձեալ , յաւիտեանական կենաց համար՝ որ պիտի վայլենք մէկալ աշխարհքին մէջը , թէ որ պահենք Աստուծոյ պատուիրանքները :

Բարի ծերը կ'ուրախանար ասոնք ըսելով — Ար տեսնեմ , ըսաւ , որ մայրդ տը պաւորեր է սրտիդ մէջ ան պատուիրանքները՝ որոնք զինքը զօրացուցեր են իր թշուառութեանցը մէջ . իրացընէ՛ք բրիատոնէի մը մեծ մխիթարութիւն է՝ իր քաշած միշտերը Աստուծոյ սիրոյն համար : Դու ալ շատ բաղդաւոր ես , որ ասանկ ըսաւ մայր մը ունիս , իմ սիրելի տղաս :

— Ա՛հ ի՛նչ պատուական , ի՛նչ սիրելի մայր է իմ մայրս , կանչեց Առդովիկոս աշուրները արցունքով լեցուած . զիս ալ ի՛նչպէս կը սիրէր , չեմ կրնար ըսել : Շատ ջերմեռանդ է իմ մայրս , ամէն օր՝ առաւօտ իրիկուն աղօթք կ'ընէր ինձի հետ , մասնաւորապէս հօրս համար , խնդրելով Աստուծակ՝ որ օր մը նորէն արժանի ընէ մէկ զմէկ տնտեսալու , և դարձընէ զանիկայ իր հայրենիքը . մեղք իմ խեղճ մօրս . անիս , որչափ կը տրտմէր հայրենիքէն հեռանա-

լուն և հօրմէս բաժնուած ըլլալուն հա-  
մար : Թէ որ մէկը վրայ հասնէր , մէկէն  
կը ջանար հանդարտ երեւնալու , և ոչ եր-  
բէք մէկու մը գանդտեր էր : Միայն իրի-  
կունները սննեակ մտած ատենը՝ կը հա-  
ռաչէր՝ արցունքոտ աչքերը երկինք վերցը-  
նելով :

— Վա՛ն է , լա՛ն է , ըսաւ երէցը . Մս-  
տուած կը լսէ թէ՛ իրեն , և թէ՛ քու աղօթ-  
քիդ :

— Աս ալ այնպէս կը հաւատամ , կրկնեց  
Վուդուիկոսը , բայց քանի մը բան կայ  
որոնց չեմ կրնար խելք հասցնել : Արբոր  
ես կ'աղօթէի անտատին մէջը , Մստուած  
ինձի շուտ մը մտիկ ըրաւ ու խաւրեց բարի  
Վորենյիոսը . բայց ահա իրեք օր է որ  
իրեն կ'աղաչեմ որ զիս մօրս քով տանի , և  
կ'երևայ որ շուզէր լսել աղօթքիս : Հիտա  
կը՝ թէ որ ես իրեն տեղը ըլլայի , շուտ մը  
մտիկ կ'ընէի մարդկանց , և կու տայի ամէ-  
նուն իրենց ուղածը :

— Մն ատենը անոնց մեծ թշուառու  
թեանց պատճառ կ'ըլլայիր , սիրելի Վուդու  
վիկոս . Մստուած որ ամէն բան կը ճանչ-  
նայ , գիտէ ինչ պէտք է մարդկանց : Ին-

քր ամենէն խելացի է , և միշտ մեր բարիքը ուզելով , չկրնար յանձն առնուլ մեր ամէն ուզածը , կամ գոնէ ան կերպով որ մենք կ'ուզենք : Շատ անգամ մարդկան փառիաքը անկարգ է . և շատ բան որ մենք օգտակար կը կարծենք , կրնան մնաստակար ըլլալ մեզի : Բայց աղօթքը ամենեւին պարտաւ չէ . Աստուած երբեմն իրենց օգնութիւնը ուշ կու տայ , բայց միշտ ան կերպով որ աւելի շահաւոր ըլլայ մեզի : Տես՝ Տիմայ ինքը դքեղ հողալով նոր ծնողք տուաւ քեզի . առանկ ալ կրնայ մխիթարել քու մօրդ սիրտը , և դքեղ օր մը իրեն գիրկը տանիլ :

— Ա՛հ , իմ սիրելի մայրս , կանչեց տղան՝ խաչաձև դնելով ձեռ ուրները կուրծքին վրայ , ա՛հ չեմ կրնար բացատրել սրչափ կը սիրեմ դքեղ , և սրչափ կը ցաւիմ որ իմ անխելքութեանս համար սիրտդ կտարած եմ : Ա՛հ , ո՞վ գիտէ , սրչափ պիտի ցաւի իմ սրտածառաւս :

Ա. յայտէս ըսելով Ա ռ. գովիկոս , սկսաւ լալ :

— Թող , Թող , պէտք չէ այնպէս տրտամիտ տղաս , ըսաւ ծերը , այլ նայէ որ ջեր-



մեռանդ ըլլաւ ու աշխատասէր : Այս ամէն  
 օր քանի մը ժամ քեզի դաս կու տամ .  
 գաղղիներէն կարդալ լաւ գիտես , պէտք է  
 որ գրել սորվիս , նոյնպէս գերմաններէն ալ  
 կարդալ : Այս ջանամ պիտի սորվեցնել քե-  
 ղի ինչ որ օգտակար կ'երևնայ ինձի : Ազ-  
 նիս Արեւնայտար և իրեն կիներ թող կու  
 տան որ դաս ինձի : Հիմա գնա , սիրելի  
 Առդուիկոսա , և ալ մի լար . Աստուած  
 կրնայ ուրախութեան փոխել քու ցաւերդ ,  
 և քու մայրդ մխիթարել :

Առդուիկոս ժողովրդապետին տուած  
 դասերուն լաւ ուշ կը դնէր , և ուսման  
 ժամերը իրեն համար օրուան ամենէն  
 զուարճալի ժամանակն էին : Շատ փա-  
 փաք ունենալով գիտութեան , նոր նոր  
 հարցմունքներ կ'ընէր . որոնք առիթ կ'ըլ-  
 լային զուարճալի և խելք բացող խօսակ-  
 ցութեանց : Անքն իր կողմանէ շատ խելք  
 կը բանեցրնէր , և միշտ շնորհակալ կ'ըլ-  
 լար իր վարպետէն :

Ժողովրդապետին անուանը տճնախրմ-  
 բութեան առջի օրը , Առդուիկոս աղաչեց  
 Յոհաննային որ քիչ մը ստակ տայ իրեն :  
 Ան ալ հարցուց թէ ինչ պիտի ընես :

— Ա'ուզեմ, ըստ, բան մը գնել ժողովրդապետին համար :

— Բայց ինչ կրնաս գնել քիչ մը ստակով :

— Գիտեմ որ ինքը ծաղիկ շատ կը սիրէ՝ մանաւանդ վարդը : Ջաղացպանին պաշտոնը ամէջ գեղեցիկ վարդենի մը կայ՝ որուն ծաղկըները բացուելու վայ կն . ես աղաչեցի Ջաղացպանին որդւոյն որ քանի մը հատ տայ ինձի . ան ալ ուզեց որ ծախէ :

— Շատ աղէկ, կրկնեց Յոհաննան ծիծաղելով մը, ուրախ եմ որ դու կը պատուես ժողովրդապետը, և ահա ստակը քեզի կու տամ ուզածդ առ :

Առդովիկոս մէկէն վազեց Ջաղացքը՝ ծաղիկ գնելու :

— Տղա խեղճ ես, պատասխանեց իրեն Ջաղացպանը, որ ստակդ առ չբացուած վարդերուն համար կ'ուզես տալ : Ապաստաններհինգ օր մը, և այնչափ վարդ կը բացուի, որ արժան գնով կրնաս շատ գնել : Ինչո՞ւ կ'ուզես նմանիլ անոնց՝ որ չեն ամբշնար տալու իրենց ստակը անանկ պրտուղ մը գնելու համար, որ շարաթէ մը



վերջ աժան աժան կը ծախուի : Այտք է տղաս՝ քիչ մը սպասել, ժամանակը վարդերը կը ծաղկեցընէ : Վուգովիկոս տրրտմութեամբ պատասխանեց՝ թէ իրեն համար չէր գնելքը, այլ պարզև պիտի տար ժողովրդապետին իրեն անուան օրը . — Ըսոր խօսք չիկայ, սիրելիս, բայց ստակդ քեզի պահէ, վասն զի ես քեզի չէ թէ միայն փունջ մը վարդ կու տամ, հապաամբողջ վարդին տունկը : Սեր պատուական ժողովրդապետին համար ինչ ալ ընենք, կ'արժէ :

Ինչ ուրախութիւն եղաւ Վուգովիկոսին, երբ ծափելով առաւ վարդենին, զարկաւ կոնակը և վազելով աւազերիցուն գնաց, ու պարզեց իրեն՝ ըսելով աս խօսքը, որ կարդացեր էր գրքի մը մէջ . “Ստուած վարդով զարդարէ կենացդ ճամբան ,” :

— Մեսկից առիբ աս գեղեցիկ վարդենին, հարցուց երէցը՝ սիրտը շարժած . Վուգովիկոս պատմեց իրեն թէ ինչ կերպով ստացեր էր, և ժողովրդապետը շատ հանեցաւ աշկերտին փայ, որ այսպէս ջանացեր էր իրեն հաճոյ եղածը իմանալ և ընծայել :

— Աստուած օրհնէ զքեզ, սիրելի Աս-  
դուսիկոս, ըստ, դուն ալ հիմայ կը նմա-  
նիս աս գեղեցիկ վարդի ծաղկըներէն մե-  
կուն, նայէ որ միշտ լաւ և բարեպաշտ  
ըլլաս, ան ասնն աս վարդերէն աւելի գե-  
ղեցիկ կը մեծնաս :

Ատրբ երբոր Ասդուսիկոսի անուան օրը  
եկաւ, ժողովրդապետը իրեն պարգևեց  
աղօթագրքոյկ մը գաղղիներէն, գեղեցիկ  
կաղմած ու ոսկեզօծ, որուն վրայ գրեց  
սուրբ գրքին աս վճիռը, “ Անդեցկու-  
թիւնը և մանկութիւնը ծաղկի պէս կ’անց-  
նին, իսկ ով որ Աստուծոյ կամբը կը կա-  
տարէ, յախտեան կը մնայ ” :

Ասդուսիկոս մեծ ուրախութեամբ ընդու-  
նեցաւ գրքոյկը, ըսելով ժողովրդապետին,  
թէ ինձի ասկէ հաճելի ընծայ չէր կրնար  
ըլլալ: Այլ իրաւցրնէ որ այնպէս էր, վասն  
զի մէջը շատ գեղեցիկ աղօթքներ կային,  
որ տղան առտն իրիկուն կը կարգար, թէ  
եկեղեցւոյ մէջ և թէ իր տունը :



ԳԼՈՒԽ Զ

Գեղեկական կեանք .

ՔԻՉ ատենուան մէջ սլաթի Վազո-  
վիկոսը վարժեցաւ իրեն նոր բնակարանին  
սուխորութեանցը , ու Վորենցիոսի և Յո-  
հաննային սիրտը շահեցաւ . տղաքն ալ  
եղբօր սէս կը սիրէին զինքը : Անոր վրայ  
ամէնուն ցրցուցած դռթը՝ մոռցնել տուին  
անոր թէ օտար տան մէջ է : Թէպէտ  
սիրտը միշտ կը վառէր մայրը տեսեալու  
փափաքով . բայց կը մխիթարուէր յուսա-  
լով թէ զինքը քիչ ատենէն սլիախի դանայ , և  
տղայական բնութեան աս ուրախութիւնը ,  
քիչ ժամանակի մէջ իրեն տխուր մտած-  
մունքները սրտէն հանեցին : Այնպէս կայ-  
տառ էր , և անուշ բնաւորութիւն մը ու-  
նէր , որ գեղին մէջը ամէնքը երթալով ա-  
ւելի կը սիրէին զինքը :

Առջի բերանը գիւղական կեանքը իրեն  
հաճոյ չէր . իր սրանդխտութեան երկրորդ

օրը , որ քիչ մը սուլորականէն եւել ուրախ էր . առաւօտանց գնաց գեղին տղոյը հետ տեսնալու լիճը . և չորս կողմը պարտօն լէն ետքը դարձածին պէս , մէկէն հարցուց թէ պատրաստ է գահալէն :

— Սիրելի Ղուգուլիկոս , ըսաւ Յոհաննան ժպտելով մը , պէտք է որ վարժիա մեր սուլորութեանցը : Հարուստները գահալէն կը խմեն առտուանց կաթին հետ , իսկ մենք աղքատներս կաթը կը խմենք առանց գահալէի , որ աւելի աժան և առողջարար է . փորձէ ու տես :

Ասանկ ըսելով բերաւ իրենն աման մը կաթ և մեծ կտոր մը կարմրցուցած հաց : Ղուգուլիկոս , երկան ատեն վազելով գաշտերը յոգներ էր , շատ ախորժելով նախաճաշիկը ըրաւ , և ըսաւ իրենն մօքը թէ այն չափ համով չէր եկած իրենն գահալէն . և անկէց ետքը կ'աղաչէր՝ որ իրենն միշտ կաթ տայ : Վարժեցաւ նաև ընտանեաց պարզ կերակուրներուն . վասն զի աշխատելով ամէն կերակուր իրենն ախորժելի կ'երևնար , և ժուժկալութեամբ առողջ և ուժով կը մնար :

Սինչև ան ատենը մէկ նեղ փողոցի մը

մէջ սնած ըլլալով, իմացաւ հիմա որ շինական կեանքն ալ ունի իր գուարձութիւնը : Յոհաննա որ շատ կը գուարձանար բնութեան գեղեցկութիւնով, կը ջանար որ նոյն գագաթունքը իրեն որդուցը և Վուգու վիկոսին սրտին մէջ ալ արժընցընէ . որուն հետ անկէ վերջը կրնար գիւրաւ խօսիլ, բաւական սորված ըլլալով գերմաներէն լեզուն :

( ) ր մը Յոհաննան սենեակը, պատուհանները և հայլին լաւ մը մաքրեր էր, երբոր ներս մտաւ Վուգու վիկոսը, ու ըսաւ .

— Ըս սենեակը իրաւ գեղեցիկ է, բայց ես քաղաքը աւելի գեղեցիկները տեսեր եմ . ուր պատերը ծածկած էին մեծ պատկերներով, պատուհաններուն մէջ տեղը հայլիներ ոտկի շրջանակով, և գետինը աղուոր կապերս փռած . հոս ալ անանկ ըլլար ինչ գեղեցիկ պիտի երևնար :

— Միրելի Վուգու վիկոսս, ըսաւ Յոհաննան, մենք գեղացի ենք, չունինք այնչափ ստակ որ առ մեծագործ բաներուն ծախենք, ուր թողունք որ անոնք հարկաւոր բաներ ալ չեն . մենք որ բնութեան գեղեցի-

կաթիւնը միշտ կը տեսնանք , ծիծաղելաբան չէ՞ որ պատերուն վրայ ուզենք անանք նմանցընել : Այդէ ի՛նչպէս կապոյտ է տակիկները . տես ի՛նչպէս կը կանանչնան ու կը ծաղկին անտառները և դաշտերը , ի՛նչպէս ծառերը զուարճալի կերպով ժամին չորս դին կը սլատեն . ո՞ր արհեստաւորը կրնայ ընել ասանց նման պատկերք մը : Աս ծաղկունքով պատած դաշտը՝ որ պատուհաններուն առջին տարածուած է , այնպէս գեղեցիկ կապերտ մըն է որ իշխաններն ալ չեն կրնար ունենալ անոր նմանը . և աս լիճը որուն մէջը կը՛նկարուին երկիկները , անտառը , ժայռերը , բերդերը , հայի է մը աւելի գեղեցիկ չէ՞ արդեօք , որ և ոչ պալատներու մէջ կը գտնուին : Ի՛նչ կ'ըսես , տասնկ չէ՞ ո՞վ Վ ուղտիկոս :

— Իբրա է , ըսաւ Վ ուղտիկոս , այսպէս գեղեցիկ տեսարան մը չէի տեսած մեր քաղաքը , ուր ամէն կողմ ուրիշ բան չէի տեսնար՝ բաց պատեր ու քարայտտակ բակեր . հոս ամէն բան կարծես թէ կը ծիծաղի :

— Տես ուրեմն , թէ ի՛նչպէս մեր բարեբար տէրը հոգացել է զարդարելու մեր բնակութեան երկիրը :



— Ա՛հ , իրաւ որ Աստուած բարի է , կանչեց տղան , և դաշտերը իրեն բարութեան յայտնի օրինակ մըն են :

Ամէն առտու Վորինցիոսի ընտանիքը արևուն հետ կ'ելլային անկողինէն , և արևը մտնալէն վերջը կը պառկէին . Վուդուոլիոսի շատ հաճոյ եկաւ աս բանս :

— Բաղքին բնակիչները խենթ են , կ'ըսէր , որ առաւօտեան զուարճալի ժամերը անկողնի մէջ կ'անցընեն , գիշերուան կէսն ալ արթուն կը կենան : Աւելի լաւ կ'ընէին թէ որ կանուխ ելլային , կանուխ ալ պառկելու երթային :

Շատ կը զուարճանար Վուդուոլիոս անտառներու մէջ մտնալ , ելակ ժողլել , և վայրենի ծաղիկներու փունջեր կապել . բայց ամէն բանէ վեր իրեն հաճոյ էին իրիկուան խաղերը ծառերուն տակը կամ մարգագետնին վրայ : Տղաքը զինուորական կըթուծիւններ կը ձևացընէին , ինչպէս պատերազմի ատեններ սուլօրութիւն է տղոց . անգամ մը Վուդուոլիոս կեցեր կը նայէր , վերջը ըսաւ իրենց . — Այգպէս չէ , եկէք ես ձեզի դաս տամ թէ որ կ'ուզէք :



Տղաքն ալ շատ լաւ , ըսին ուրախու-  
թեամբ . և ինքք սկսաւ սորվեցնել անոնց  
զանազան զինուորական քայուածքներ ու  
շարժմունքներ : Ըն պզտիկ զինուորները  
տեսան որ Վուդուվիկոսը այսպիսի քաներու  
մէջ աղէկ վարպետ է , զինքը հազարապետ  
ընտրեցին . ինքն ալ ասոր վրայ քիչ մը  
հպարտացաւ : Զաղացականը՝ տղուն ա-  
ղաչանքովը մէկ ժմբուկ մը գնեց , Յո-  
հաննան ալ թաշկինակ մը տուաւ դրօշակի  
տեղ . իսկ Վուդուվիկոս թղթէ նշաններ  
շինեց , մէկ քանի զինուորներու բաժնեց :  
Իրիկունները , երբ գեղացիք կու գային  
ձխատերեւները վառած ծառերուն տակ ,  
շատ կը զուարճանային աս զինուորական  
փորձերով : Դողովըդ ապետն ալ երբեմն պա-  
տուհանէն կը դիտէր զանոնք , բնական սէր  
մը ունենալով տղոց վրայ : Գեղացի կնիկ-  
ներէն մէկ քանին կը յորդորէին իրենց զա-  
ւակը , և շնորհակալ կը լլային Վուդուվիկո-  
սի որ իրենց տղաքը ասանկ կը սորվեցընէր :

Օր մը Յոհաննան ըսաւ իրեն .

— Դու կրնաս լաւ զինուոր մը ըլլալ :

— Ինչո՞ւ չէ . պատասխանեց տղան զուարթ  
դէմքով :

— Բայց կարելի է որ մահուան վտանգի մէջ իյնաս :

— Գիտեմ, բայց սակայն հայրենեաց համար մեռնիլը շատ փառաւոր մահ է :



## ԳԼՈՒԽ Է

Հոգ և Մխիթարաբուրիւն .

ՎՈՐԵՆՑԻՈՍ և Յոհաննան երջանկաւ լուծեամբ անցուցին ամառը : Իրենց տղաքը և Վուդալիկոսը կ'օգնէին գետինը բանելու աշխատութեանց մէջ , և իրենց մեծ վսիթարութիւն կ'ըլլային : Բայց հունձը ինչպէս որ կը յուսային՝ անանկ չեղաւ . ասիկէց զատ Վորենցիոս ձի մը կորսնցուց , և ստիպուելով ուրիշ մը գնել , շատ ստակ խարձեց : Տան վարձքը վճարելու ատենն ալ հասաւ , և բաւական ստակ չունէր տալու . գնաց շատ հարուստ գեղացիներուն ընկաւ փոխ ստակ առնելու , բայց անոնք կամ չկրցան կամ չուզեցին անոր օգնել : Վորենցիոս և Յոհաննան մեծ տրամութեան մէջ ընկան , վասն զի , իրենց պայմանին նայելով թէ որ չվճարէին վարձքը , պէտք էր տունը տեղը թողուն :

Վ ճարման օրը եկաւ հասաւ , Վ որենցիոս համբեց ստակը , տեսաւ որ յիտուն լիրա կը պակսէր . — Վ այ ինձ , ըսաւ , վերակացուն վրաս պիտի տրտնջայ . բայց աս տարուան վարուցանին անյաջողութիւնը նայելով և իմ ձիուս կորսուիլը գիտնալով , և մտածելով որ ես յանցանք չունիմ՝ կարելի է թէ գութը շարժի մեր վրայ և աս տղոցը մեղքընայ :

— Աստուած տայ , որ այնպէս ըլլայ , պատասխանեց Յոհաննան լալով . ես բոլոր սրտովս կ'աղաչեմ Աստուծոյ որ ողորմի մեր որդւոցը . վասն զի թէ որ ասկէջ դուրս ընկնանք , կարծեմ որ չենք դանար ուրիշ յարմար տեղ մը :

— Աս ալ պիտի աղօթք ընեմ ըսաւ Վ որենցիոս , տունէս ելլալէն մինչև վերակացուն երթալու ատենս :

Աս վերակացուն խիստ մարդ մըն էր , և ատանց լաւ մտածելու ուզածը կ'որոշէր . ամենեւին պատասխան չտուաւ և ոչ խօսք մը՝ Վ որենցիոսի աղաչանքին և անոր պատմածներուն . ստակը համբեց , մնացած պարտքը տեսաւ , և արձակեց վարձուորը լսելով . — Վիտես մեր դաշինքը . թէ որ

այսօր չառնեմ յիսուն լերան՝ որ կը սրակ-  
սի իմ հաշուէս, պէտք է որ թողուք  
եղաք ան տեղէն. հիմըկընէ ուրիշ մը  
պատրաստուած է, և ձեզմէ աւելի մեծ  
գումար կու տայ ան տեղւոյն համար: Ա-  
հա ըսաւ վճռական կերպով մը՝ ցուցնելով  
պայմանագիրը, ահա քու խոսամունքդ,  
քու կնիքդ, գիտես որ եղած դաշինքը  
չփոխուիր:

Աորենցիոս գլուխը կախած ճամբայ ե-  
լաւ տրամուծեամբ դէսլ ի տուն, և մտա-  
ծելով թէ ի՞նչ բերնով պիտի պատմէ կնո-  
ջը և որդւոցը, արցունքները կը թափէին  
աչքերէն, և կը հառաչէր: Անտառէն  
անցնելու ատեն, պատահեցաւ ան կաղ-  
նիին որուն տակը դտեր էր Առդովիկո-  
սը, և ծունկ չողելով աղաղակեց տաք  
սրտով. — Ա՛յ տէր Աստուած, ահա աս  
տեղս ան խեղճ տղան թողուած ձեռքերը  
կը վերցնէր դէսլ ի քեզի, և դու մտիկ  
բրիւ իրեն աղաչանքին. հիմա ես ալ զքեզ  
օգնութեան կը կանչեմ. ո՛հ, գթա՛ իմ կնո-  
ջըս, գթա՛ իմ զաւկներուս, գթա՛ Առ-  
դովիկոսին ալ: Դու ըսիր ո՛վ տէր, Ա-  
ռդովսն անկէք ուրիշներու, ես ալ ձեզի

կ'ողորմիմ : Աս գութ ցուցուցի աս տղուն  
վրայ , հիմայ գու ալ գութ ունեցիր իմ  
վրաս , ուլ տէր :

Վ որենցիտս ասանկ աղօթելէն վերջը՝  
մեծ քաջալերութեամբ ելաւ , ու հազիւ  
թէ հարիւր քայլ մը առաջ գնաց , մէյ  
մ'ալ Յոհաննան դիմացը ելաւ վազելով :  
— Ո՛հ կանչից Վ որենցիտս . արդեօք  
թշուառութիւն մը հանդիպեցաւ , ի՞նչ  
կայ որ ատանկ արտորալով կու գաս :

— Չէ՛ , չէ՛ , սրտասխանեց Յոհաննան ,  
ամէն բան լաւ կ'երթայ , և սկսաւ խնտալ :

— Վ երակացուն չուզեց սպասել որ վերջը  
վճարես ստակը , այնպէս չէ՞ :

— Ա՛հ , այնպէս է , ըսաւ Վ որենցիտս :

Յոհաննան ալ ուրախութեամբ . —

Աս ալ այնպէս կը կարծէի :

— Հասրա ի՞նչպէս խնտալով կ'ըսես :

— Ի՞նչպէս չխնտամ որ Աստուած մեզի  
օգնութեան հասաւ . սիրտս այնպէս ու  
րախութեամբ ու երախտագիտութեամբ լե  
ցուած է , որ կ'ուզէի ամէնուն սրտամեջ  
չկրնալով սպասել քու դառնալուդ . ուստի  
վազեցի որ աւետեմ քեզի մեր բախտը :  
Խաբեցանք մեր պարտքերէն , նայէ , ը



սաւ , և ձեռքը բանալով ցուցուց իրեն՝  
քսան փայլուն ոսկի :

Վորենցիոս , որ հազիւ թէ աչքերուն  
կը հաւատար , կանչեց ,

— Տէր Աստուած , ըսէ՛ ինձի ո՞ւր դատար  
աս ստակը :

— Արչափ ալ մտածելու ըլլաս չես կըր-  
նար գիտնալ թէ ինչպէս դտայ . ուրեմն  
եկու որ պատմեմ քեզի : Քու երթալէդ  
ետքը՝ սրախս վրայ անանկ նեղութիւն մը  
ինջաւ , որ չեմ կրնար բացատրել . մեծ  
տղաքնիս դացեր էին Վուգուլիկոսին հետ  
քրիստոնէականի դաս առնելու , մեկտը-  
նոնք կը խաղային պարտէ՛ղին մէջ , պղտիկն  
ալ օրօրոցին մէջ կը քնանար : Աս անոնց  
զգեստը մաքրելով սկսայ կարել , և աղօթք  
ընելով Աստուծոյ՝ աչքս մէյմը օրօրոցին  
կը դարձրնէի , մէյ մը պարտէ՛ղին վրայ :  
Ա՛հ , ըսի , Աստուած ողորմէր աս խեղճ  
տղայը՝ որ դեռ չեն գիտեր իրենց վրայ դա-  
լու թշուառութիւնը : Արցունքները կա-  
թիլ կաթիլ երեսէս կ'ինջնային : Վուգուլի-  
կոսին զգեստն ալ առի կարկտելու . և  
դարձնելու ատենա՝ մէկ մեծ ձեռք մը տե-  
սայ , ուսկից բան մը փայլեցաւ աչքիս :



քիչ մը ծակըր մեծցուցի, մէյ մ'ալ աս  
 ոսկիներէն մէկը վար ընկաւ : Հիմայ եկու  
 մտածէ իմ զարմանքս՝ տէր Աստուած ը-  
 սի, ի՞նչ բան ունին հոս տեղը աս ոսկի-  
 ները : Աս մտածելով վերջապէս անանկ  
 դրի միտքս որ՝ կամաւ զգես տին մէջ կարեր  
 էին . և անշուշտ Առդուլիկոսի մայրը  
 փախչելու ատեն ան վտանգաւոր ճամբոր-  
 դութեանը մէջ, մտածեր է աս կերպով  
 քիչ մը ստակ խալսել : Ատքը մէկիկ մէ-  
 կիկ կոճակները քակեցի, և ամէն մէկուն  
 տեղը ոսկի գտայ, բոլորը մէկէն քսան  
 հատ : Ահա, տես թէ ի՞նչ կերպով Աս-  
 տուած մեղի օգնեց . հիմայ դու կրնաս  
 լճարել վերակացուին, որ զմեզ ազատ  
 թողու :

— Աղէկ կ'ըսես, պատասխանեց Աորեն-  
 ցիտս մտածելով մը, բայց չեմ գիտեր թէ  
 կրնանք գործածել աս ստակը, որ մերը  
 չէ՝ հասցաւ Առդուլիկոսի մօրը . Աստուած  
 սլահէ զմեզ ուրիշի բանը յափշտակելէն :

— Աս ալ ատ մտածեցի, ըսաւ Յոհան-  
 նան, բայց վերջապէս մտքէս ըսի որ Առ-  
 դուլիկոսի մայրը մեզմէ հարուստ է, և  
 կրնայ լճարել իրեն տղուն համար քանի

մը ոսկի, մանաւանդ թէ՛ մենք իրաւունք  
ալ ունինք սլահանջելու, շարաթը երկու  
կամ իրեք լիրա: Անկէց զատ իրեն հա-  
մար գլխարկ մը գնեցինք, զգեստ և ճեր-  
մակեղէններ, և ամէն ծախքը մէկտեղ յի-  
տուն լիրայէն աւելի կ'ըլլայ, ուրեմն հիմայ  
ասկէց ան ան 50 լիրան, և վճարէ վե-  
րակացուին:

— Իրաւունք ունիս, ըսաւ Վորենցիոս,  
մենք կրնանք գործածել խղճմտանքով աս  
ստակը. և յայտնի կը տեսնեմ որ Աս-  
տուած մեզի օգնութեան հասեր է: Բայց՝  
քիչ մը մտածելէն վերջը ըսաւ, հասցա թէ  
որ վերակացուն զարմանայ այսպէս շուտ  
ստակը գտնելուս, ինչ ըսեմ իրեն:

— Ըսէ ինձի համար թէ ինքը տուաւ աս  
ստակները, որ առանց իմ գիտնալուս սլա-  
հեր է եղեր. ուրեմն դուն դնա, ես ալ շու-  
տով տուն կը գառնամ:

— Ակնոր եկուք քիչ մը տեղ հետս,  
կրկնեց էրիկը, որ ցուցրնեմ քեզի ան ծա-  
որ՝ որուն տակը գտայ մեր բարի Վու-  
գովիկոսը: Ահա աս տեղն էր որ ինքը  
կ'աղօթէր Աստուծոյ մեծ եւանդեամբ, ես  
ալ հոս կ'աղօթէի քիչ մը առաջ, Աս-

տուած ալ լսեց ինչի . Այլ Աստուած իմ ,  
կանչեց Վորենցիոս ձեռուրները երկինք  
վերցրնելով , պէտք է շնորհակալ ըլլամ  
քեզի , որ մտիկ ըրիր իմ աղաչանացս , լսէ  
հիմայ ալ իմ շնորհակալութեան աղօթքս :  
Յոհաննան ծունկ չոքեցաւ էրկանը քով ,  
և երկուքը միատեղ ջերմեռանդ աղօթք-  
նին նուիրեցին Աստուծոյ :

Ինքը տուն դարձաւ , Վորենցիոս ալ  
ճամբայ ելաւ Վալտէնպէրկ երթալու .  
բայց ուշացաւ ետ դառնալու ինչուան կէս  
գիշեր : Վուսինը լուսաւորեր էր բոլոր  
գեղը , և ճառագայթները լիճին երեսը  
կը զարնէր , Յոհաննան տանը դրանը դի-  
մացը նստած կ'սպասէր էրկանը : Տը-  
ղաքը արդէն պառկած էին , և իրենց  
համար ընթրիքը պատրաստ էր . երբոր  
եկաւ Վորենցիոս , նստեցան և խօսեցան  
ան օրուան դիպուածներուն վրայ :

— Արդեօք գիտէր Վուգովիկոս որ իրեն  
զգեստին մէջը ան ոսկիները կային , հար-  
ցուց Վորենցիոս :

— Աարծեմ չէ . վասն զի ես իրեն ըսի որ  
կոճակները հաներ եմ , անոնց տեղը մետա-  
ղէ ուրիշ կոճակ պիտի կարեմ , ինքն ալ  
հանեցաւ :

— Արեմն՝ որովհետև անոր մայրը չէ  
ուզած որ խօսուի ան ստակին վրայ, մենք  
ալ պէտք է լինիք :

— Ես ալ այնպէս կը մտածեմ, ըսաւ Յո-  
հաննան . կ'ուզեմ զանիկայ խնայութեամբ  
գործածել՝ ինչպէս մեզի յանձնուած ա-  
ւանդ մը : Արչափ որ ծախք ընենք վրան,  
կը նշանեմ, իբր թէ տղուն դաստիարա-  
կը ըլլայի . ինքը զգեստի և ոտքի ամանի  
կարօտ էր, ահա հիմայ ստակ ունինք  
զնեղու :

— Ես զգեստին մէջը կարած ոսկին  
ըսաւ Վորենյիտս . ծածուկ օրհնութիւն  
մին էր որ Վուդովիկոս բերաւ մեր տունը :  
Մանայ անոր, չկրնալով հատուցանել մեր  
վարձքը, պիտի ստիպուէինք ելլալ հոս-  
կէց : Բայց մենք առատասիրտ զանուե-  
ցանք Վուդովիկոսին վրայ, Մտուած ալ  
աւելի սուստ եղաւ մեզի . ահա ատանկ  
զարմանալի կերպով՝ ամէն բան կը կար-  
գաւորէ Մտուած, և մէկին տեղ տասը  
կու տայ բարիք ընողներուն :

Արիւրն ալ հանդիստ առին խորունկ  
լուծեամբ մը : Վուսինը դեռ կը փալ-  
փլար ծառերուն կամանչ ճիւղերուն մէ-

ջէն, գիշերուան անուշ հալը կը տարածէր  
հետուէն ծաղիկներուն անուշահոտութիւ-  
նը. իրենց երախտադիտութիւնն ալ ազնիւ  
խունկի մը պէս սրտերնէն վեր կ'երջար  
Ըստուծոյ առջևը :



## ԳԼՈՒԽ Ը

### Օտարական գիւտարներ .

Մէկ իրիկուն մը յանկարծ թմբուկ զարնուեցաւ խաղաղ դաշտին մէջը . գաղղիայի գունդ մը կ'անցնէր ան դեղէն , քիչ մը ատենուան համար իջեւան կը փրնտուէր : Յոհաննան մեծ վախ ունէր՝ չըլայ թէ օտար զինուորները խեղճ Ղուգուլիկոսը չարչարեն , ու նաև զինքը և էրիկն ալ անոր սլատճառաւ , որ իրենց երկրէն քշուածներուն տղան էր :

Ղուգուլիկոս ըսելով որ մէկ զինուոր մըն ալ պիտի գայ իջեւանելու իրենց տունը . ուրախութեամբ ուզեց հագնիլ կիրակի օրուան զգեստը , որպէս զի երթայ ընդունի զանիկայ : Բայց Յոհաննան ըսաւ իրեն , դնա ամէն օրուան զգեստդ հագիր . աւելի լաւ է որ դուն Գորբատոսին նման հագուած ըլլաս : Բայց ամէն բանէ աւելի քիզի կը սպատուիրեմ գաղղիներէն չխօ-



սիս . զքեզ անոնց ճանչցնելէն առաջ թէ  
իրենց հայրենակիցն ես , պէտք է փորձենք  
թէ ինչպէս կը վարուին մեզի հետ : Օ՛ի  
նուորը աս խօսքիս վրայ մտաւ սննեակը , և  
շատ ուրախացաւ տեսնալով շտկած մա-  
քուր ան տունը , և իր հիւրընկալներուն  
վրայ ազնիւ ու մարդասէր կերտարանք  
մը : Աստաւ սեղանին քով , և վառեց իրեն  
ծխատերևը Վուդուլիկոսին բերած կրա-  
կէն . Գորրատոս ալ դրաւ սեղանին վրայ  
աման մը ազնիւ դարեջուր և գաւաթ մը :  
Աս միջոցիս Աղիսաբեթ սեղանին սինդոն  
կը փռէր . զինուորը ծխելէն դադրելուն  
պէս , ապուրը սեղանին վրայ դրուեցաւ .  
Վուդուլիկոս սլատրաստեց երկու աղաւնիի  
ձագ խորված . Գորրատոս ալ աղցանը :  
Օ՛եր զօրականը ժպտելով կը նայէր տղոց  
վրայ , և սկսաւ ուտել մեծ ախորժակով  
մը . իսկ Վուդուլիկոս՝ կրակին քով քա-  
շուած աչուրները տնկեր կը նայէր անոր  
վրայ :

Քիչ մը ետքը ուրիշ զինուոր մըն ալ  
եկաւ հոն իր ընկերին , և սկսան տաք  
խօսակցութիւն մը գաղղիներէն լեզուով :  
Վուդուլիկոսի ականջին իր մայրենական



ընդունան անուշ երաժշտութեան մը պէս եկաւ , ու չկրնալով համբերել , եղաւ վաղեցի՝ գաղղիներէն ընդունով բարեւեց զինուորները : Ասոնք ալ ուրախութեամբ իրեն գարձան և շատ զարմացան որ գեղացիի տղայ մը այնչափ դիւրութեամբ գաղղիներէն կը խօսի : Քիչ մ'ալ խօսելով , անտարակոյս միտքերնին դրին որ Վաղղիա ծնած պիտի ըլլայ անիկայ , և հարցուցին թէ ի՞նչ դիւրուածով հոս եկեր ես : Առդովիկոս ալ պատմեց թէ ինչպէս ճամբայ ելեր էր իր մօրը հետ , ինչպէս կորսուեցաւ անտառին մէջ . ու Յոհաննան և Արինցիոս իրենց բոլը առին զինքը :

Օյնուորները փախաբով մը մտիկ ըրին աս պատմութիւնը , շատ զարմանք ցուցընելով ան բարեպաշտ վարձուորին և իրեն կնոջը վրայ :

Արկրորդ օրը բոլոր զինուորներուն մէջ տարածուեցաւ աս լուրը՝ թէ գեղին մէջը գաղղիացի տղայ մը կայ . և շատերը վազեցին տեսնալու զանիկայ , անոնց զօրապետն ալ ըսելով անոր անունը , ուզեց որ սեղանի կանչեն զան ալ : Առդովիկոս խուցէն եղաւ վար ինչաւ , իրեն գեղեցիկ

կատրոյտ զգետոր հաղած , բաճկոնը և ճերմակ զանկապանները : Յոհաննան ալ անոր սև ու երկայն մազերը սանտրեց կլորցուց , ու սնանկ ճամբայ ելաւ գէւլ ի զօրապետին բնակարանը . մտաւ սննեակը գլխարկը ձեռքը առած , և բոլոր սեղանին ատենը , ուրախ և բարեկրթեալ երեցաւ :


Քիչ ատենէն ան զինուորները գային , և ուրիշները անոնց տեղը եկան : Ազտի Ա ու գումիկոսը գեղին մէջ երեւիլի մարդ մը դարձեր էր . և զինուորներուն ու գեղայիներուն մէջ կոխ մը ըլլար , միշտ ինքը մէջ կը մտնար . և որովհետեւ ասոնք օտար լեզու չէին հասկընար , ինքը քանի մը խօսքով զերենք կը հաշտեցընէր . գեղին ծերերուն ու կտրիճներուն մէջ կը մտնար անոնց թարգման ըլլալու , և այնպէս երկու կողմին ալ հաճոյ կ'ըլլար : Շատ զինուորներ , որ կու գային սպաննալից երեսով և բարկացած նայուածքով , Ա ու գումիկոսին հետ խօսելով կ'անուշնային . սնանկ որ տղան շատ թշուառութիւններէ աղատ պահեց ան գեղը :

Բնակիչքը երախտագէտ եղան իրեն , և

զեղին վերակացուն խոստացաւ Վորենցիս  
սին տունը ազատ սլահել աս զինուորաց  
քնակութենէն : Ըս բանս հաճոյ եղաւ աս  
մէնուն , Վորենցիոս ալ քիչ մը հոգի ա  
ռաւ :







ԼՈՒԴՈՎԻԿՈՍ

Որ 61

ԳԼՈՒԽ Թ

Վիրաւորուած սպայ մը .

ՔԱՆԻ կ'երթար պատերազմը կրճան  
րանար . գաղղիացիք կը տիրէին երկրին ,  
գերմանացիք կը ջանային զանոնք վճատել :  
Սաստիկ պատերազմ մը եղաւ գեղէն քիչ  
մը հետո , և գեղին բնակիչքը երան բըւ-  
րակի մը վրայ տեսնալու պատերազմը :  
Թէպէտ կը լսէին թնդանօթներուն ձայ-  
նը , բայց ծուխը կ'արգիլէր որ չէին կր-  
նար տեսնալ պատերազմողները . Վուգո-  
վիկոս ալ բլուրին վրայ առջի ելօղներէն  
մէկը եղեր էր , և ան տեսարանը ամէնէն  
աւելի իրեն մտածելու առիթ եղաւ : Ար-  
ծես թէ ամէն հարուած իրեն սրտէն կ'անց-  
նէր . վասն զի կը մտածեր թէ ան պատե-  
րազմով որչափ մարդկանց կեանքը պիտի  
կորսուի . երեսին գոյնը նետած , անշարժ  
հոն կեցած մտիկ կ'ընէր պատերազմին ա-

ղաղակը, և սիրտը չէր քաշեր բերանը բա-  
նալ բան մը խօսիլ :

Աատերազմը ինչուան իրիկուն քշեց .  
ան ատեն գեղացի մը եկաւ , դողալով  
պատմեց ինչ որ տեսեր էր : — Այս , ըսաւ ,  
երկու բանակին մէջ տեղն էի . գնտակնե-  
րը ասդիէն անդիէն սուլալով կ'անցնէին ,  
ես վախէս ետե ետե քաշուելով թուփե-  
րուն մէջ սլահւրտեցայ . որչափ կարող  
եղայ ճամբայ գտնալ : Դառնալու ատենս  
հանդիպեցայ մէկ վերաւորուած գաղղիա-  
ցի սպայի մը, և իրեն կ'ուզէի օգնել, բայց  
երջանիկ սեպելով զիս . որ կեանքս խալըս-  
ցուցի, վազելով իմ ճամբաս եկայ : Արբոր  
գեղացին լմնցուց խօսքը, և ուզովիկոս ա-  
ղաչեց քովն կեցօղներուն, որ երթան փնտռեն  
ան վերաւորուած սպայն . ոմանք իրաւցնէ  
կ'ուզէին երթալ, բայց չար Աղոդիոսը, ան  
որ Ա որենցիոսին թշնամին էր, հիմայ ալ սկը-  
սաւ ըսել. — Չէ, չէ, մեծ անխոհեմութիւն  
է երթալը, վասն զի կ'երևնայ որ հրացան-  
ները մեզն կը մօտենան, մտիկ ըրէք ինչպէս  
թնդանօթը անտառին մէջ կը թնդայ . ան-  
շուշտ դուք ալ կը զարնուիք կ'իյնաք : Ար-  
բոր սպատերազմը լամնայ, զինուորները կը



հոգան իրենց վերաւորները . մեզի անօգուտ է զանոնք մտածելը :

Ըս խօսքը յաղթեց , և գերապիք ցրուեցան ասդիս անդին . իսկ Ն ուղղութիւոս մինակ մնացած աշուրները չորս դին կը սլըտըտցըներ , ինչուան որ թնդանօթին ձայնը կտրեցաւ և մէկ ահաբեղի լուսթիւն մը տիրեց : Ըտեն ատեն ականջին՝ օգնութիւն ուզելու խղճուկ ձայն մը կու գար : Ըռաքինի տղան , սիրտը սիրով և գթութեամբը լցուած՝ կ'ուզէր ամէնուն օգնութիւն հասնիլ , մանաւանդ իր հայրենակիցներուն . չկրցաւ ինքը զինքը բռնել , և շուտ մը ինջնալով բըէն . վազեց դէսլ ի լճին եզերքը՝ ուսկից որ ձայները կու գային : Թուփի մը տակ տղմուտ երկրի վրայ տեսաւ գաղղիացի երիտասարդ սպայ մը , գոյնը նետած՝ բայց գեղեցիկ կերպարանքով , նստած գետնին վրայ : Հրացանի գնտակ մը ձախ ոտքը վերաւորեր էր՝ , անոր համար վէրքը պըրլելով իր թաշկինակովը՝ մինչև ան գեղը գրեթէ քաշկըտտուելով եկեր էր հրացանին վրայ կըտթընած . բայց ուժը բոլորովին կտրելով հոն ձամբուն վրայ ինկեր էր : Սաստիկ կը

ցաւեր վէրքը , ուսկից շատ արիւն կը վազէր . խեղճը արդէն միտքը դրեր էր որ բոլոր գիշերը ան խոնաւ տեղը պիտի անցընէ , և ինքը զինքը Աստուծոյ յանձնած էր հոգեւաբքի մը պէս :

Ահա աս միջոցիս՝ վրայ հասաւ Առդու վիկոս , և իրեն հետ գաղղիներէն խօսելով սաստիկ դուժ ցրցուց վրան : Անտէր երիտասարդին անանկ երեցաւ՝ որ երկնքէն հրեշտակ մը ինչած է , և իրեն հետ կը խօսի . Առդուվիկոս ասդին անդին վազեց ջուր գանալու և օգնութիւն հասցնելու , և ջաղացականին պատահելով աղաչեց որ իրեն տունը տանի . բայց ջաղացականը պատասխանեց ծանր ձայնով մը՝ թէ ատընելը վտանգաւոր է , որովհետեւ ասկէ քիչ մը առաջ հրացանի ձայներ հասան ականջիս որ շատ մօտիկէ կու գային . ահոր համար չեմ համարձակիր զիս և իմ որդիքներս մեռնելու վտանգի մէջ գնել :

Բայց Առդուվիկոս անոր ոտքը ինկաւ կ'երգուրնայներ յանուն Աստուծոյ՝ որ վժայ ան խեղճին վրայ . այնչափ աղաչեց , որ ջաղացականին սիրտը շարժեցաւ և գնաց

իր մարդկանցը հրամանաց որ պատգարակ  
մը առնեն և հետը դան : Այս միջոցին Վու-  
դովիկոս ամանով մը պաղ ջուր առած՝  
առաջ անցաւ վաղելով եկաւ ու սպային  
տուաւ , որ քանի մը հեղ խմելէն վերջը  
կանչեց . — Ահ ինչպէս կը դուլանամ ,  
Աստուած գրեղ վարձատրէ ազնիւ տղայ :

Ջաղացւորներ և հետը մանչ մը , եկան  
մերուցին միրաւորը ու դրին պատգարակ  
կին մէջ : Վուդովիկոս աներևոյթ եղեր էր  
աս առնն . բայց հազիւ թէ ջաղացքը հա-  
սան , տեսան որ ինքն ալ կու դայ միրաբու-  
ժը հետը առած : Վերաբոյժը ոտքը կա-  
սեց և յոյս տուաւ որ Աստուծոյ օգնու-  
թեամբը կատարեալ կ'առողջանայ . սո-  
խօսքերը Վուդովիկոս դաղղիներէն լծարդ-  
մանեց , և զինուորը լսելով շատ մխիթա-  
րուեցաւ :

Ջաղացւորներ քիչ մը ուտելու բան բե-  
րաւ անոր , որ ուտելէն վերջը քնացաւ .  
Վուդովիկոս ջանաց որ հիւանդին քովը  
ճրագ մը դրուի գիշերը , վերջը ինքը ու-  
րախտութեամբ տուն դարձաւ :

Հետեւեալ օրը արևուն ծագելէն առաջ  
հիւանդին գնաց , նոյն առններ միրաբոյժն

ալ ներս մտաւ , և տեսաւ որ վիրաւորը ա-  
ղէկ վիճակի մէջ է . քիչ մը լաժի ծուէն  
պէտք եղաւ , Վուդուլիկոս շուտ մը Յո-  
հաննային գնաց՝ ուզեց , բայց ան չէր գի-  
տէր ուսկից գտնայ . Վուդուլիկոս ես հի-  
մայ կը գտնամ ըսաւ , ու շուտ մը լաժի  
կտորներ առաւ , ու Յոհաննային և տղոց  
հետ շուտ մը գզեց տարաւ վիրաբոյժին ,  
հետն ալ գրականի թաշկինակ մը . և տուաւ  
սպային ըսելով . — Քու թաշկինակդ ա-  
րիւնոտ է , ասով պէտք է պատել վերքդ :  
Մ. յսչափ հոգը ու գութը , հիւանդին սիր-  
տը շարժեց ու աչուրները արցունքով լի-  
ցուած կանչեց . — Աս թաշկինակը ամէն  
բանէ առաջ աչուրներս սրբելու պիտի  
գործածեմ :

Վուդուլիկոս օրուան մէջ քանի մը հեղ-  
կու գար և անոր անկողնին քովը նստելով  
կը խօսէր , իր մօրը և իրենց տխուր փա-  
խրասեանը վրայ : Ա՛հ կ'ըսէր չեմ կրնար  
մտածել ան նեղութիւնը ան հոգը որ իրեն  
սլատճառեցի , և ան արցունքները որ թա-  
փել տուի , առանց իմ լալուս :

Մ. յսպիտի խօսքեր սպային ալ կը յի-  
շեցնէին իրեն մօրը ցաւը՝ երբոր ինքը

պատերազմի երթալու եղաւ , և նախ հասարակ զինուոր գրուած ըլլալով ետքը իր խելքովը առաջ գացեր ու սպայութեան պատուին հասեր էր : Ի՞նչ զարմանալի դիպուած՝ կ'ըսէր Վուդուվիկոսին , որ երկուքնիս ալ ասանկ հետու ենք ընկեր մեր ծնողքէն և հայրենիքէն : Պուն իմ կեանքս խաղսցուցիր , և ամէն օր նոր նոր ծառայութիւններ կ'ընես ինձի . իսկ ես հիմայ աղքատ եմ և բոլոր ունեցածս չունեցածս աս ժամացոյցն է : Բայց կը յուսամ անսկ ժամանակ մը գայ՝ որ կարենամ փոխարինել քու առատաձեռնութեանդ և ազնիւ սրտիդ , և օգուտ մը ընել քեզի ու քու ընտանեացդ : Ա՛յլ գիտէ , Մտուած որ զքեզ հոս բերաւ զիս մահուրնէ ազատելու համար , կարելի է զիս ալ պատրաստեր է զքեզ երջանիկ ընելու :

Վարդէօնի վերքը (աս էր սպային անունը) օրէ օր լանալու վրայ էր . բայց սիրտը կը մաշէր զբաղմունք մը չունենալուն համար : Աւտի Վուդուվիկոս գնաց ժողովրդապետին աղաչեց որ իրեն քանի մը գաղղիերէն գիրք տայ . հիւանդն ալ , թէպէտ և աս գիրքերը բոլոր դատտիարակու-

Թեան վրայ կը խօսէին, զամէնն ալ յօժարութեամբ կարդայ : Աւ անոնց օգուան ալ խմայաւ՝ ու ըսաւ . — Արժեմ թէ ասոնք շատ օգտակար եղան ինձի, մխտքս և սիրտս շտկելու : Աստուծոյ մասնաւոր բարութեանը ցոյց մը կը սեպեմ, զիս ան պատերազմին շփոթութենէն հանելը ու աս միայնութեան մէջ բերելը, ուր ձեռքս այսպիսի ընտիր գրքեր ընկան, որոնք սորվեցուցին ինձի ձանձնալ զիս և շտկել :

Աս միջոցիս գաղղիացի զինուորները դարձան հոս եկան, և շատ ուրախութիւն ունեցան երբոր տեսան Վլայրէժն իրենց առաջնորդը, զոր սրտանց կը պատուէին և կը սիրէին . Վուգուիկոսն ալ գովեստներով մեծցուցին, և բարեկամի պէս իրեն հետը կը խօսէին : Վլայրէժն յորդորուեցաւ ուրիշ հեռու քաղաք մը երթալ, աւելի լարժկուելու համար . ուստի իր բարերարէն հրաժարելով սխմեց զինքը դրկին մէջ, և շնորհակալ ըլլալով այնչափ խնամակարութեանցը վրայ, վերջի խօսքը աս եղաւ . Մի լար սիրելի Վուգուիկոս մի լար, հիմայ մէկզմէկ կը թողունք, բայց նորէն պիտի տեսնուինք :



Բայց ուրիշ զօրագլուխ մը դեռ քիչ մը ա-  
տենն մնաց ան գեղը իր խումբովը, և երբոր  
երթալու եղաւ՝ ան գեղին մեծերը դանդրուե-  
նի ի ծառերուն տակը ժողկեց, որոնց ետեւէն  
եկան նաև խումբ խումբ կանայք և տղայք :  
Այս զօրագլուխը ալսայիացի ըլլալով լա-  
կը խօսէր գերմաներէն . նախ գովեց գե-  
ղացիքը սլափիկ Վուդուիկուս սիրով ընդու-  
նելու Տամար, որ իրեն հայրենակցաց օգ-  
տակար եղեր էր հոն, մանաւանդ ան վի-  
րաւոր սպային . մենք ալ ըսաւ, իրեն պատ-  
ճառաւ . ձեզի ներողամիտ կ'ըլլանք . գիտ-  
ցած ըլլաք որ աս գեղս ուրիշ պարտք մըն  
ալ պիտի վճարէր պատերազմի համար .  
բայց ահա Վուդուիկուսին համար՝ զօրա-  
վարը ատ պարտքը կը վերցնէ ձեր վրայէն .  
և ինձի յանձնուած է որ ձեր վերակա-  
յուին յանձնեմ աս հրամանագիրը, որով  
միշտ ապահով ըլլաք :

Այսպէս ըսելով տուաւ թուղթը, ջա-  
ղացականին և Վորենցիտսին ձեռքը, սխմեց  
սիրով, թմբուկը զարնել տուաւ և վնուուր-  
ները ճամբայ ելան :

Այս զօրավարին խօսքերը շատ տպաւո-  
րութիւն ըրին գեղացոյ վրայ . անոնք որ



Վորենցիոսի կողմը բռնեի էին՝ ուրախացան, իսկ Աղղղիոս և իր կուսակիցքը քիթերնին կախեցին :

— Ար տեսնա՞ք, ըսաւ գեղի վերակացուն, որ մեր աւագերէցը խելքով կը խրատէր զմեզ և չէր խաբուած, ըսելով թէ Վուգուլիկոսը մեզի օրհնութեանց աղբիւր մը պիտի ըլլայ :

— Այնպէս է, այնպէս է՝ կանչեց գեղացի մը. քրիստոնէականին սորվեցուցածը իրաւ է. “ Աջրանի ողորմածաց զի նորա ողորմութիւն գտցեն ” : Հոն կեցողները ձեռք զարկին աս խօսքերուն, և շատերը կ'երգուրննային որ անկէ վերջը առիթը չփախցընեն ողորմութեան գործք ընելու :



## ԳԼՈՒԽ Ժ.

### Դատաւտան մը .

ՕՐԵԱԴԱԴԱՐՈՒՄՆ Եղաւ հաստատուեցաւ , և շատ օր զինուոր չէր տեսնուէր գեղին մէջ . ամէնքը կ'ուրախանային ան խաղաղութեան վրայ՝ որ առջի թշուառութիւններէն ետքը եկաւ : Տայց Վորենցիոսի գլուխը մեծ գաշիք փորձանք մը կար . վրան ամբաստանութիւն ըրին թէ գեղին ճարտարապետէն խել մը ստակ գողցեր է . և դատաւտանը աս կերպով եղաւ : Վորենցիոս աս ճարտարապետին պարտեղին մէջ շատ ծառ պատուաստեր էր . և որովհետեւ պարտեղին պատը ցած և կրղմինտրով ծածկած էր , անոր վրայ կը գնէր իր գործիքները , ու դիւրութեամբ կ'անէր անկէց : Ճարտարապետը ան կրղմինտրներուն տակը խել մը ոսկի ստակ պահած էր , վախնալով որ չըլլայ թէ գաղղիացւոց ձեռքը իյնայ :

Օ ինուորները երթալէն վերջը , գնաց  
գանձը վերցրնելու , բայց չգտնալով կաս-  
կած ըրաւ Վորենցիտին վրայ . վասն զի  
գիտեր նաև՝ թէ Վորենցիտս իր տանը  
վարձքը վճարելու կարօտ մարդ է : Ան  
կալուածապետին գրագիրէն ալ իմացաւ ,  
որ Վորենցիտս ոսկի ստակով իր սրարտքը  
վճարեր է եղեր . ասիկայ իրեն յայտնի  
ապացոյց մը սեպելով անոր գողութեանը ,  
ամբաստանեց զանի Վալտէնպէրկի դա-  
տաւորին՝ որ միանգամայն նոյն կալուածքին  
տեսուչն էր : Գրագիրը ցրցուց ճարտա-  
րապետին Վորենցիտսէն առած ստակնե-  
րը , որ տեսածին պէս ուրախութեամբ լե-  
ցուած կանչեց . — Ահա բուն աստեք են  
որ ինձմէ գողցեր էր :

Վորենցիտսի հարցուեցաւ , ան ալ շտկե-  
շիտակ իմացուց որ անոնք Վուդովիկտին  
զգեստին մէջ կարուած գտուեր էին : ցը-  
ցուց ան գրքոյկն ալ որուն մէջ Յոհաննան  
կը գրէր ամէն օրուան ծախած ստակը :  
Ատքը կնիկն ալ կանչուեցաւ , որուն վկայ-  
ութիւնը ամէն կերպով երկանը խօսքին  
համաձայն ելաւ . դատաւորը ան գրքոյկը  
լաւ մը քննելէն վերջը՝ ըսաւ . — Աստ

լաւ . բայց ո՞վ կրնայ ապահովեցնել թէ դուք  
աս խորամանկութիւնը մտածած չըլլաք՝  
պարտրկելու համար յանցանքնիդ՝ թէ որ  
յայտնուելու ըլլայ : Ատրը Առդովիկոնն  
ալ կանչեց . և անոր՝ աս ստակներուն  
վրայօք ամենեւին տեղեկութիւն չունենալը ,  
Աորենցիոսի գէմ՝ նոր վկայութիւն մը ե-  
ղաւ : Աս ամէն բանէն , տեսուչը որ խըս-  
տութեան հետ նաև արդար մարդ մըն էր ,  
շատ շիտթեցաւ , չէր գիտէր ամբաստանու-  
ղին հաւատոյ՝ թէ ճարտարապետին , և դա-  
տապարտութեան վճիռ մը տայ Աորեն-  
ցիոսին : Աւստի տարակուսանքի մէջ թո-  
ղուց բանը . բայց ամէնուն մտքին մէջ՝  
Աորենցիոս և իր կիները գող մը սեպուե-  
ցան :

Աս գիպուածը բոլոր գեղը լմայաւ , և  
ամէնուն խօսակցութեան նիւթ եղաւ : Ա-  
ղիտաբեթ և Գորբատոս Աորենցիոսի զա-  
կրնները շատ անդամ լալով տուն կը դառ-  
նային , ըսելով իրենց ծնողացը համար թէ  
գող են :

Իրաւ որ Աորենցիոս և Հոհաննան միշտ  
արդար և աշխատող սեպուած էին , բայց  
իրենք ալ թշնամի ունէին . և ան գեղին

մէջ օտար ըլլալինն արդէն սլատձառ մըն էր անոնց , որ կը նախանձէին նաև ան դեղեցիկ կալուածքին վրայ , զոր վարձեր էին . իսկ Աղողիօսը յուսալով որ աւելի աժան ձեռք ձգէ զան , չէր ուզէր աս առիթը փախցընել : Շատ ատենէ ի վեր ծածուկ կերպով կը զրպարտէր զ՝ որենցիօսը , բայց հիմայ սկսաւ ամէն տեղ հրատարակել թէ խարեբայ և գող է : Ճարտարապետն ալ անոր խօսքերուն արձագանք կուտար , և կ'ըսէր թէ դատաւորը անիրաւութիւնս րբաւ . վասն զի պէտք եղած խստութիւնը չբանեցուց :

Շատ գեղացի կնիկտիք ալ նախանձելով կ'ատէին Յոհաննան՝ անոր վրայ երևցած կրթութեանը համար՝ որ իրեն ծնողքը տուեր էին քաղաքի մէջ : Իրեն խօսուածքը և կերպը միշտ վայելուչ էր , հագուստն ալ իր տեղին սովորութեանը յարմար , ոչ այնչափ հարստութեամբ՝ որչափ կոկիկ վայելութեամբ , որ գեղին բնակչաց հագուստէն շատ լաւ կ'երևար : Ահա բոլոր աս բաներու համար նախանձոտ աչքով կը նայէին վրան , և թշուառութեանց մէջ իրեն վրայ չէին գլծար :

Իսկ Յոհաննան շատ անգամ տրտմու-  
թեամբ մէկ դի կը քաշուէր լալու համար :  
բայց Վորենցիոս ընդհակառակն՝ իր անմե-  
ղութեանը վրայ վստահ ըլլալով՝ կ'երթար  
կնիկը մխիթարելու : Սիրելի Յոհաննա ,  
ըսաւ մէկ իրիկուն մը , նայէ լուսինը ինչ-  
պէս լոյս կը ձգէ մեր վրայ . ահա ան սև  
ամպը գինքը կը ծածկէ հիմայ , բայց վայր-  
կեան մը սպասէ՝ կը տեսնես որ լուսինը  
առջինէն աւելի լուսաւոր կ'երևնայ : Այս-  
պէս պիտի ըլլայ մեր անմեղութիւնն ալ .  
հիմայ զմեզ զրպարտելով՝ իբր թէ ամպով մը  
կը ծածկեն , բայց վերջապէս պիտի յաղթէ  
լոյսը , վասն զի Աստուած պիտի ցրուէ ան  
թանձր շուքերը որ մարդիկ մեր վրայ ձգե-  
ցին :



## ԳԼՈՒԽ ԺԱ.

Իրար գտնաշինն .

ԿԻՐԱԿԻ առաւօտ մը Վորենցիտս և Յոհաննան ժամ գնացին՝ ինչպէս որ սովոր էին . գեղեցիկ աշնան առաւօտ մըն էր , տղաքը կը ցածկրտէին ուրախութեամբ . բայց մայրը շատ տխրած էր տեսնալով , որ քովէն անցողներէն շատերը բարկացած աչքով մը կը նայէին իրան : Ժամը ջերմ հոանդութեամբ աղաչեց Աստուծոյ , որ խնայէ իրենց ու լծողս որ երկայն ատեն դողի անունով նախատուած մնան :

Ի դարձին տեսան որ իրենց գրանը առջև փառաւոր կառք մը կեցեր էր չորս ձիով : Մէկ քանի գեղացիներ՝ որոնք Յոհաննայէն առաջ անցեր էին , սկսան կանչել . — Ահա մեր դաւառապետին կառքն է . փառք Աստուծոյ , վերջապէս դարձաւ : Վաղտէնապէրկի խաթունը Վորենցիտսի գրանը առջև հասեր էր , քովն ալ



նստեր էր ուրիշ կին մը ազնուական դէմ-  
քով : Առդովիկոս տեսածին պէս զան  
խաթունը , կայծակի պէս թռաւ վիզը փաթ-  
թուեցաւ կանչելով . — Ա՛հ մայր իմ , ա-  
նուշիկ մայր իմ . ան ալ զինքը թևերուն  
մէջ գրկելով , արցունքովը կը թրջէր ու  
կու լար , Առդովիկոս ալ ուրախութենէն  
սկսաւ լալ : Աս տեսարանը տեսնող գեղա-  
յինները սրտերնին ելած կը նայէին , ոմանք  
կը մոմնային ըսելով . — Արմ մտքէն  
կրնար անցնիլ թէ աս խեղճ տղան ասանկ  
աղնիւ մայր մը ունենայ :

Ժողովուրդը երթալով կը գիզուէր ,  
Այրտէնպէրկի խաթունը սննեակ մը տա-  
լաւ Առդովիկոսը իր մօրը հետ , որ այլայ-  
լութենէն կենալու ուժ չունենալով ընկաւ  
նստարանի մը վրայ . և սրտէն սրարծենա-  
լով մը տղուն վրայ կը նայէր , ու կ'ըսէր .  
— Ա՛հ ի՛նչպէս մեծցեր , ըռնացի ,  
կտրիճցի ես . և աչքը կը պտրտցունէր  
վրան՝ կը գլխէր , թէ ի՛նչպէս մաքուր հա-  
գուած էր . վասն զի նոր շինած էին հագուս-  
տը , կապոյտ վերարկու մը , բանուած վզնոցն  
ալ փայլուն ճերմակ : Այրը հազար ու  
մէկ հարցմունք ընելով՝ չէր կշտանար զար-

մանապէն և ուրախութենէն, որ ժամանակը  
լաւ անցուցեր էր :

Մէյ մը կը պատմէր իր քաշած ցաւը՝  
երբոր չգտաւ զինքը պանդոկին մէջ, և  
էրկանը տրտմութիւնը որդւոյն կորսուե-  
լուն վրայ, մէյ մըն ալ կը դառնար ուրա-  
խութիւնը յայտնելու : Արկուքն ալ անանկ  
երջանկութեան մէջ էին, որ բոլոր աշխարհ  
աշուրնուն չէր երևնար : Աորենցիոս և  
Յոհաննան բան մը չէին հասկընար անոնց  
խօսքէն, որովհետեւ գաղղիէրէն կը խօ-  
սէին, բայց իրենց շարժուածքէն նայուած-  
քէն կ'իմանային թէ ինչ երջանկութեան  
մէջ են :

Ալալտէնապէրկի խաթունը դարձաւ Ա ո-  
րենցիոսի և անոր կնոջը, ու յայտնեց սրտին  
ուրախութիւնը այնպիսի մարդավար վար-  
ձուորներ ունենալուն . վերջը իմացուց որ  
ան իրենց խեղճ կարծած Ա ուղովիկոսը,  
աղնուական տան մը զաւակ էր :

Մայրը կը բնակէր Վրակա, ուր որ կը  
կենար Ալալտէնապէրկի խաթունը և անոր  
էրիկը . իրենց տանը վերակացուն հրա-  
ման առած էր որ քաղքին մէջ ինչ որ  
հանդիպի՝ իմաց տայ իրեն . անոր համար

զրեց գաղղիացի տղուն զգեստին մէջի  
գտնուած ստակներուն պատմութիւնն ալ :  
Վալտէնպէրկի խաթունը գեռ չէր ճանչ-  
ցած Վուդուիկոսի մայրը . վասն զի քա-  
շուած առանձնական կեանք մը կ'անցնէր .  
բայց բերնէ բերան աս պատմութիւնը պատ-  
մուելով՝ կոմսուհւոյն ականջը հասաւ ,  
շուտ մը վազեց գնաց Վալտէնպէրկի խա-  
թունին , և կարգաց անոր վերակացուին  
գրածը , որուն թղթին մէջ որոշ գրած  
էր տղուն մօրը անունը , տղուն կորսուած  
օրը , և ստակներուն ճիշտ թիւը : Աոմ-  
սուհին չտարակուսեցաւ որ գտնուած տղան  
իրն է , և կը վառէր սիրտը կարօտուն՝ թէ  
կերպ պիտի տեսնայ . բայց չէր համարձա-  
կէր ան ճամբորդութիւնը ընելու , վասն զի  
գաղղիացի զօրքերը ան կողմերը բռներ  
էին : Ան ատենը Վալտէնպէրկի պարօնը  
ըսաւ . — Ահա ես կնոջս հետ իմ բերդս  
պիտի գառնամ , թէ որ կ'ուզես քանի մը  
օր անցնելու մեր հետը , ես միատեղ կը  
տանիմ , և ամենեւին վտանգի մը չես հան-  
դիպիր . կոմսուհին մեծ ուրախութեամբ  
ընդունեցաւ աս հրաւերքը , և գացին :  
— Ար տեսնա՞ք , ըսաւ Վալտէնպէրկի

խաթունը , աս ստակները պատճառ եղան որ Վուդուիկոս մօրը դառնայ . թէ որ աս ձախող կասկածը ձեր վրայ չըլլար , ո՞վ գիտէ կոմսուհին դեռ սրչափ ատեն իր զաւակը պիտի շտենէր : Ա՛հ կանչեց Յոհաննան , աս ուրախութիւնս ինձի մոտ զրնել տուաւ քաշուած ամօթս :

Վալտէնսկէրկի խաթունը ակնարկելով խմացուց կոմսուհայն , որ երթալու ատեն է . ան ալ ոտք ելաւ և սիրալիր խօսքերովը իր շնորհակալութիւնը յայտնեց : Ըն ատենը Յոհաննան գնաց շուտ մը որ ան ստակներէն մնացածը դարձրնէ՝ Վուդուիկոսին մօրը տայ , բայց անիկայ սլառասխանեց . — Ըստ բանդ մի հոգար , իմ առջի հոգս պիտի ըլլայ փոխարինելու զաւկիս վրայ զբոցուցած ձեր խնամքը :

Եղիսաբեթ և Գորրատոս գնացին Վուդուիկոսի ճերմակեղէններուն և զգեստներուն կապոցը բերին , բայց Վուդուիկոսի վրայ տխրութիւնը պատեց . աչքերէն շատ արցունքներ թափելով՝ բաժնուելու բարևը տուաւ Վորենցիոսի ու բոլոր ընտանեացը . ամենն ալ հետը կու լային , կոմսուհին ալ նորէն սիրտը շարժած , — Ըհա ըսաւ

Յոհաննային , նոր ցոյց մըն ալ ձեր սիրոյն  
որ ունեցեր էք տղուս վրայ :

Վալտէնայերկի խաթունը կը ջանար մխի-  
թարել Յոհաննան ու տղաքը . — Մի  
լաք , ըսաւ , Վուդովիկոս ձեզ բոլորովին  
չժողուր , ինձի հետ Վալտէնայերկ պիտի  
բնակի , հոն կրնաք տեսնալ զինքը շատ  
անգամ :

Վուդովիկոս վերջի այցելութիւնը ընելէն  
ետեւ ժողովրդապետին՝ շնորհակալ ըլլալով  
իրեն խնամոցը , դարձաւ մտաւ կառքը ու  
դէպ ի Վալտէնայերկ սկսան երթալ :



## ԳԼՈՒԽ ԺԲ

Վարձք և պատիժ .

ՈՒԴՈՎԻԿՈՍԻ մայրը վառէն պէրկ գնաց բնակեցաւ . էրիկն ալ հաշտու թիւն եղածին պէս դարձաւ հոն եկաւ : Չպատմուիր ինչ ուրախութիւն զգացին իրենք՝ երբոր այնչափ երկար ատեն բաժնուելէն վերջը մէկգմէկ գտան : Եւ առջի վայրկեաները անցրնելէն ետե՛ սկսան մտածել թէ ինչ փոխարէն ընեն Վորենցիոսի :

Կոմսը ու կոմսուհին թէպէտ Գաղղիա իրենց ունեցածները կորսնցուցիւ էին , բայց գեռ Մագդիոյ մէջ շատ հարստութիւն ունէին . և որովհետեւ կոմսուհին իր անգին քարերը ազատեր էր . բացաւ արկղիկը ու բռաւ . — Եւ աջ յանձն առեր էի բոլոր աս գոհարները տալու որդիս գտնալու համար , իսկ հիմայ Վորենցիոսի ու Յահանային փոխարէն՝ գոնէ ասոնց մէկը տամ , իմ Վուրովիկոսիս վրայ ցրցուցած



գովթերնուն համար : Վ ալտէնպէրկի պա-  
րոնին աղաչենք , ան պզտի երկիրը՝ որն որ  
վարձու բռներ է ու կ'աշխատի մէջը ան  
խեղճ մարդը , մեզի ծախէ . մենք ալ իրեն  
պարգևենք : Շատ լաւ ըսաւ կոմսը ուրա-  
խութեամբ . որովհետեւ իրենք պահեցին  
մեր զաւակը , որ ամէն գոհարներէն աւելի  
թանկագին է մեզի :

Վ ալտէնպէրկի խաթունը արդէն կը  
փափագէր ձեռք ձգել ան գոհարը՝ որ  
մատնի շինած էր . և անոր արժէքը կա-  
լուածքին կէս գինն էր , մնացած կէսին  
համար ալ կոմսուհին քանի մը ուրիշ ան-  
դամանդներ վրան աւելցուց : Բայց Վ ալ-  
տէնպէրկի պարոնը ըսաւ . — Ընանկ  
չըլար , նայեցէք ես ինչ կ'ըսեմ . դուն աս  
մատնին կնկանս կու տաս՝ որովհետեւ կը  
փափագի , և քու յիշատակդ իր քովը կը  
մնայ . ես ալ միշտ Վ որենցիտսի կը թողում  
ան երկիրը որ բանեցնէ , միայն կէս վարձք  
առնելով իրմէ ասկէ վերջը : Այսպէս  
ինքը իբրև իրեն ստացուածքը սեպելով ան  
գետինը , կրնայ հանդատութեամբ ապրիլ  
և ընտանեացը պէտք եղած ապրուստը  
հանել : Այոմն ալ կոմսուհին ալ աս ա-



ոպարկութեանը շատ հաւնեցան . ուստի  
դաւառապետը կանչեցին որ գրի վրայ առ-  
նէ աս բանս :

Վալտէնայէրկի խաթունը կ'ուզէր կան-  
չել Վորենցիտար , բայց կոմսուհին ըսաւ ,  
— Աչելի լաւ է որ ես իրեն երթամ էր-  
կանս հետ , աս լուրը տալու համար : Ան-  
ատենը Վալտէնայէրկի պարոնը ըսաւ ,  
— Իրաւյնէ դուք չէ թէ միայն տալը՝  
հասկա ազնուականութեամբ տալու կերպն  
ալ գիտէք . ուրեմն մենք ալ հետեւնիւզ  
կու գանք :

Շուտ մը ձիերը լծուեցան , ճամբայ ե-  
լան . երբոր հոն հասան , Վուդուիլկուս շուտ  
մը ուրախութեամբ կառքէն դուրս ցատկեց ,  
և Վորենցիտսին հանեց ցրցուց սրայմանա-  
գիրը . ան սխատուական մարդն ալ զարման-  
քով մը կարգաց և լի երախտագիտու-  
թեամբ աչքը երկինք վերուց :

Վալտէնայէրկի պարոնը ըսաւ , — Ահա  
տես մէկ խեղճ կորսուած տղու մը վրայ  
ունեցած դուժգ' ինչպէս կ'ատրահուին  
թէ քեզի և թէ քու որդւոցդ հաստատուն  
բնակութիւն մը :

— Եւ դորձքը , կրկնեց Վալտէնայէրկի

խաթուներ , ոչ երբէք անխորձ կը մնայ , բայց վարձքը աս աշխարհիս վրայ ինչ որ ըլլայ , անդիի աշխարհքը շատ աւելի մեծ է :

Իսկ գեղին բնակիչքը չէին կրնար զարմանքէն դադրիլ , տեսնելով տէրը որ իր խեղճ վարձուորին այցելութեան եկեր է : Ճարտարապետին կնիկն ալ կ'ըսէր էրկանը . — Թէ որ աս ամէն բանը առաջուցմէ գիտնալու ըլլայինք , այնչափ կը բռնադատէինք Վորենյիտը՝ որ գաղղիացի տղան մեզի կը յանձնէր , և անոր ամէն հոգը մեր վրայ կ'անցնէր :

Ան ատենը ճարտարապետը տեսնելով որ վարձուորին դէմ ըրած գողութեան ամբաստանութիւնը անօգուտ և շատ անիրաւ գործք եղաւ , գնաց իրեն ու զղջալով յայտնեց ըրածը , և երդուրնցուց որ ներէ իրեն : Այս անկէ վերջը սկսաւ Աղողիտսին վրայ կասկածիլ՝ որ ինչուան ան ատենը իր ամէնէն մեծ բարեկամը սեպած էր :

Վարտէնպէրկի դատաւորին գնաց ու խնայուց՝ որ գողցուած ստակին վրայօք նոր ամբաստանութիւն մը պիտի ընէ :

— Արծեմ թէ նորէն անխելք բան մը պիտի ըլլայ , ըսաւ դատաւորը , ինչպէս

որ խեղճ Վորենցիոսին վրայ ըրիր՝ առջի  
անգամ . ըսէ նայինք :

Ճարտարապետը սկսաւ խօսել . — Արբոր  
գաղղիացիք մեր գեղը մտան , ես ինք  
զինքս կորսնցուցած՝ չէի գիտեր ի՞նչպէս  
բաներս կարգի դնեմ . Աղողիոսին խոր-  
հուրդ հարցուցի , զինքը ճարտար մարդու  
մը տեղ դնելով . ան ալ ինձի խրատ տուաւ՝  
թէ ստակդ սլարտէզին մէջ պատի մը քարի  
տակ պահէ առ գիշեր , անկէ ոչ ոք կ'ըր-  
նայ առնել . իսկ թղթերը թող իրենց տե-  
ղը , թշնամիները չեն առներ զանոնք : Աս  
խորհուրդին շատ հաւնեցայ և ըսածին  
պէս ըրի . կէս գիշերուն՝ երբ ամէնքը կը  
քնանային , կամաց կամաց սլարտէզը ինձայ  
կանթեղով մը , որովհետև ստակը պահե-  
լու համար լոյս հարկաւոր էր : Ան վայր-  
կենէն սկսած՝ գիշեր ցորեկ պահած ստակ-  
ներս կը մտածէի . ու հազիւ թէ գաղղիա-  
ցիք ճամբայ ելան մեր գեղէն , մէկէն գնացի  
որ առնեմ ստակներս . մէյ մ'ալ ձինն եկաւ  
զխուս երբոր հոն բան չգտայ :

Բայոր գիշերը աչքս չկրցայ գոցել , և ա-  
ռաւօտուն մէկէն վազեցի դրացի Աղողիո-  
սիս , արթնցուցի և զխուս եկած փորձան

քր պատմեցի իրեն : Ան ատենը հարցուց  
տեսուչը , Աղոդիոս քեզի ի՞նչ ըսաւ :  
Սկսաւ ինձի բարկանալ , և ցաւակից ըլ-  
լալու տեղը կը նախատէր ու կ'ըսէր . —  
Առջափ անխելքութիւն կ'ըլլայ մի եղեր՝ որ  
հետզ ճրագ առնես , չես գիտեր որ ամէն  
քր կրնային տեսնալ գլեղ . ուստի զար-  
մանք չէ որ ստակներդ գողցուած ըլլան :  
Բայց նայէ . միտքս կու գայ որ Ա որենցիոս  
ծառերը պատուաստելու ատեն միշտ պար-  
տէզին պատին մօտերը կը կենար , և հոն  
բան մը շունէր ընելէք . հաւտայ ինձի անխ-  
կայ պիտի ըլլայ գողը , եւ թէ որ քու  
տեղդ ըլլայի՝ շտկէ շտակ զինքը կ'ամ-  
բաստանէի . բայց կ'աղաչեմ՝ որ ուրիշի  
չխմացընես թէ աս խորհուրդը ես տուի  
քեզի :

Ան ատեն սկսաւ ինքն իրեն ըսել դա-  
տաւորը . — Ձր ըլլայ թէ ան գէշ և նա-  
խանձոտ մարդը , Ա որենցիոսէն վրէժ առ-  
նելու համար մտածած ըլլայ , զինքը՝ գեղէն  
վերնտելու և իր գետինն ալ առնելու :

Վ երջը դարձաւ դատաւորը հարցուց .  
— Ատ կասկածդ իմացուցնիր ես մէկ ու-  
րիշի մը :

— Քաւ լեցի, կանչեց ճարտարապետը,  
միշտ Աղոդիոսին վրայ վտտահ եղեր էի.  
միայն հիմայ սիրտս վախ ինկաւ, և չեմ  
ուզեր որ ինքը գիտնայ՝ թէ ես զինքը ամ-  
բաստանած ըլլամ. կ'աղաչեմ ամենեւին  
բան մը չտէք իրեն :

— Հատ լաւ . դու ասկէ ետքը ամենեւին  
մի խօսիր . ես զքեզ կանչել կու տամ երբ  
ատենը գայ :

Դատաւորը լաւ կը ճանչնար որ Ար-  
ղոդիոսը անզգամ մարդ մըն է, զինե-  
մով, խաղցող, մսխող և ամէն չարութիւն  
հնարող . մտածեց որ կամաւ ճարտա-  
րապետին խրատ տուած ըլլայ ստակը  
պարտէզը պահելու, որ ինքը անկէ գող-  
նայ : Աւստի իր գրագիրը կանչեց և ծա-  
ծուկ սրտմեց իրեն աս գիպուածը, պա-  
տուիրելով որ ետէ ըլլայ խնանալու՝ թէ  
արդեօք Աղոդիոս ոսկի ստակ խարճեր  
է :

Քանի մը օրէն վերջը գրագիրը իրեն  
պատմեց . — Աղոդիոս բոլոր գիշերը գի-  
նտուն մը անցուցեր է խաղ խաղալով, և  
շատ ստակ կորսնցնելով, և պարտքերը ու-  
կի ստակով վճարեր է . ահա աս երկու

ոսկին ալ որ բաղդով մը ձեռք ձգեցի ,  
ճարտարապետին ըսածներուն նման են :

Ղատաւորը շուտով Աղողիօսը կանչել  
տուաւ , և յայտնեց իրեն վրայ եղած կաս-  
կածը : Աղողիօս սկսաւ բարկանալ , և  
գանդատել թէ իրեն պէս արդար մարդուն  
վրայ այնպիսի կասկածներ կ'ընեն . աս  
միայն կը խոստովանէր թէ ան ոսկի ստակ-  
ները ուրիշ ստրկի հետ փոխեր էր , բայց  
կ'ուրանար գողցած ըլլալը :

— Ետ կրնայ ըլլալ , կրկնեց ղատաւորը ,  
և մէկ խօսքով կրնաս վքեզ արդարացնել ,  
միայն աս ըսէ ինձի թէ՛ ոսկինց առիւր ան  
ոսկիները :

Ես հարցմունքէն Աղողիօս տակն ու  
վրայ եղաւ , գոյնը նետեց և չկրնալով կեր-  
պով մը հանգարտել , ստիպուեցաւ կամայ  
ակամայ գողութիւնը խոստովանելու : Աէ-  
կէն ղատաւարտեցաւ , որ ստակը վճա-  
րէ և քանի մը ամիս բանտը կենայ :

— Եհա այսպէս կ'ըլլայ , ըսաւ ճարտա-  
րապետը , ան մարդուն՝ որ ստկին յարզը  
չիտէ . աշխատիլ չուզեր՝ կը խաղայ կը խա-  
ղայ և կ'ըսկսի գողնալ : Մ'օրութիւնը միշտ  
գէշ պտուղներ կը բերէ , միայն առաքի-



նութիւնը և արդարութիւնը կրնան զմեզ  
երջանիկ ընել: Ա որենցիոսի անամեղութիւնը  
խմացուեցաւ, և քու յանցանքդ ամէնուն  
յայտնի եղաւ. անիկայ իր առատաձեռ-  
նութեանը և ազնուականութեանը վարձքը  
կ'առնէ, դուն ալ կը սլատժիս քու խար-  
դախութեանդ համար:

Ազոգիոս արդէն շատ սլարտք ունէր,  
սլէտք եղաւ որ ունեցածը չունեցածը ծա-  
խէ. և այսպէս ողորմելի թշուառութեան  
մէջ ինկաւ: Շատ անգամ իրեն տղաքը  
եկան Ա որենցիոսի դրանը առջև կտոր մը  
հաց մուրալու. և գեղացիքը կ'ըսէին. —  
Ահա տեսէք ինչ շահեցաւ Ազոգիոս իր  
գողութեամբքը, իր չարութեամբը, և մա-  
նաւանդ Ա որենցիոսի դէմ ըրած անդժու-  
թեանը համար:





## ԳԼՈՒԽ ԺԳ

### Հարիւրասկետք .

Ա ԱՆՏԻՆՊՈՒՄԻՆԻԱ պարոնը և իր կնիկը շատ մեծ բարեկամութիւն էին կապեր կոմսին և կոմսուհւոյն հետ . և առ բարեկամութիւնը հաստատուած էր իրենց ազնիւ սրտին վրայ : Թէպէտև արդէն խաղաղութիւն եղած էր , բայց քուածները դեռ չէին կրնար մտնել իրենց հայրենիքը . մանաւանդ որ քիչ ատենէն՝ նորէն պատերազմ սկսաւ ան մօտ տեղուանքը . և Ալտէնպէրկի պարոնը և կինը աղաչեցին իրենց բարեկամներուն՝ որ հոն իրենց քուլը կենան , մինչև յարմար ժամանակ դայ երթալու :

Այն օր մը զաղղիացի սպայ մը ան դը ղեակը եկաւ քանի մը հեծեալ զինուորաներով , և ուզեց տեսնալ Ալտէնպէրկի պարոնը : Ամէնքը զարմացեր էին անոր գալուն . իսկ Արգովիկոսի ծնողքը մեծ

վախու մէջ էին՝ որ չըլլայ թէ զերենք բունէ  
ու Գաղղիա խաւրէ :

Գեղեցիկ տեսքով մարդ մը, ոսկիէ բա-  
նած նշանով, եկաւ սրահը մտաւ . Սու-  
դովիկոս տեսաւ շտեսաւ, մէկ ուրախու-  
թեան ձայն մը վերցուց, ու մէկէն անոր  
գիրկը վազեց : Գաղղիացին ան սպայն էր  
որ ինքը վերաւորուած գտեր էր տղմուտ  
երկին վրայ . հիմայ աս սպան իր գուն-  
դուր ան գեղին մօտ անցնելու ատեն, բոլոր  
գիշերը շատ քալեր էր որ իր սղտի բարե-  
բարը մէյ մ՝ ալ տեսնայ . զինքը հոն չգրտ-  
նալով Վալտէմպէրկ եկեր էր . կրկին և  
կրկին անգամ պագաւ Սուդովիկոսը, և  
սրատմեց անոր ծնողացը՝ թէ ո՛րչափ պար-  
տական է շնորհակալ ըլլալու անոր : Վալ-  
տէմպէրկի սպարօնը հրամայուց զինքը որ  
քանի մը օր հոն մնայ : — Բայց սպայն  
պատասխան տուաւ թէ, պէտք է որ ա-  
տենին ևս իմ գնդիս քով գտնուիմ, սակայն  
կը յուսամ որ քիչ ատենէն նորէն գառ-  
նամ և աւելի երջանիկ վիճակի մէջ գրտ-  
նամ իմ սղտի բարեկամս :

Աւ աս խոստմունքին վրայ կեցաւ . վասն  
զի քիչ ատենէն խաղաղութիւն ըլլալով նա

բէն Վ ալտէնպէրկ դարձաւ , և Վ ուղովի-  
կոսի ծնողացն ալ ազատութեան հրամանա-  
գիր մը բերաւ , որ Գաղղիա կարենան  
մտնալ , և իրենց կալուածքը առնել : Աս  
շնորհքը սպայն իրեն ազգականացը ձեռ-  
քով առեր էր : Այս ահա աս կերպով բա-  
րութեանը փոխարէն վարձքը եղաւ :

Սպայն , Վ ուղովիկոս և ծնողքը մէկ-  
տեղ գացին ան գեղը , ուր որ օգնութիւն  
գտեր էր . ետքը գնաց ժողովրդապետին  
ալ և իրեն խել մը գաղղիներէն դրքեր տուաւ .  
գեղեցիկ կազմով . ջաղացպանին խել մը  
կտաւ սլարգեեց , իսկ կնկանը ժապաւէն  
և բարակ կտաւներ . և մեծ ծրար մըն ալ  
բարակ ճերմակեղէններու Յոհաննային և  
որդուցը :

Բայց իրեն մեծագոյն ուրախութիւնն  
ան եղաւ որ կրցաւ Գաղղիա տանել կոմսը  
և կոմսուհին ու իր սղտի բարեկամը :

Վ ուղովիկոս իրեն մեծ երջանկութիւն  
սեպեց քանի մը տարի գեղի մէջ անցուցած  
կեանքը . ան բնակութիւնը չէ թէ միայն  
զինքը ու ժողովուց , այլ նաև սիրտը կրթեց  
և միտքը բացաւ : Վ որենցիոսին բարեպաշտ  
սովորութիւնը որ ստաւօտ իրիկուն Աս-

տուժոյ աղօթք կը մատուցանէր, ան տուած դասերը թէ սրչափ գէշ է չար գործքը . թէ ինչպէս պէտք է համբերել հանդիպած վշտաց թէ մեր յոյսը պէտք է բուրովին Աստուծոյ վրայ դնել . նոյնպէս աւագերեցին խեղացի խրատները, և աստուածային պաշտամանց միշտ ներկայ ըլլալը : Աս ամենայն բանը Առդովիկոսի սրտին մէջ առաքինութիւնը և հաւատքը կենդանի պահեցին . գեղացոյ կեանքին վարժելով, սորվեցաւ թէ ինչպէս քիչ բան բաւական է մարդու, դո՛հ և առողջ ապրելու համար . ուստի զեղխութեանց և փափկութեանց պատճառները իրեն միշտ անշնորհք երեցան :

Վիւղական կեանքը իրեն սիրելի էր և զած, անոր համար շատ հաճեցաւ իրենց դղելին, չէ թէ աղուոր զարդարած ըլլալուն համար, այլ այգիներով դաշտերով չորս դիէն կանաչով և դալար անտառներով պատած ըլլալուն . իր մեծ ուրախութիւնն էր բնութեան հրաշալիքը քննել և անոնց մէջ Աստուծոյ մեծութիւնը փառաւորել : Ա՛ւրախանար որ աղքատներու հետ կը տեսնուի և անոնք մօտէն կը ճանչնայ :

գիտնալով որ շատ ազնիւ մարդիկ կ'ըլլան  
հիւղերու մէջ ալ : Շատ անգամ իբր աս  
զգացմանքները խնամալով հայրը զինքը կը  
գովէր . — Անհանձնութեան սէրը, կ'ը-  
սէր տղուն, մարդու սրտէն շատ հեռու  
չէ, անոր համար մեր հպատակներն ալ մեր  
օրինակին կ'ուզեն հետեւիլ . ասկէց առաջ  
կու գայ ամենայն անկարգութիւն և մեր դա-  
րերուն մոլորութիւնները, որոնց դեղ ընե-  
լու համար պէտք է որ՝ մենք ալ դառնանք  
բնութեան սլարգութեանը, և ասով խա-  
զաղինք անոնց տժգոհութիւնը, և մենք  
աւելի հանդարտ ու երջանիկ ասպրինք :

Ամսուհին ալ նոյնպէս կը մտածէր,  
և զարմանալով Առդովիկոսին վրայ երե-  
ցած Մտուծոյ նախասնամութեանը, կ'ը-  
սէր . — Մտուած վերուց ինձմէ Առդովի-  
կոսը, որ ետքը աւելի խելացի ու առաքի-  
նի դարձրնէ ինձի : Մէկ թիթեռնիկ մը,  
մէկ սլաքի թռչուն մը՝ անանկ փոփոխու-  
թեան պատճառ եղան, որ չէ թէ միայն  
տղուս՝ այլ շատերուն ալ օգուտ տուին :  
Մտալէս ազնիւ կտրիճ սուրբ մը, մահուան  
փտանդէն մեծ դժուարութեամբ՝ կ'ազա-  
տի . Արեւցիտսի խեղճ և սլարկիշտ ըն-

տանիքը աւելի հանդիստ վիճակի մը կը հասնի , ջաղացականը առատապէս կը վարձատրի . մենք ալ արձակ համարձակ կը դառնանք հայրենի երկիրնիս , մեր պապերուն թողուցած ճոխութիւնը հանդիստ սրտով ժառանգելու : Ա՛հ , քանի՛ , քանի՛ անգամ գլխուս եկած փորձանքներուն համար նեղութիւնը ծանրացեր է վրաս . բայց ետքը ճանչցեր եմ՝ որ խնայտուն և անբաւ կարողութեան տէր մէկը , ծածուկ կերպով աս ամէն բան կարգի կը դնէ , ամէնուն վերջը դէպ ի բարին ուղղելով : Ա՛նք վիճակին ամէն փոփոխութեանցը մէջ՝ աս բարի հաւատքը մեզի ճամբու գաւազան մը պէտք է ըլլայ . անոր վրայ կը լծընինք , և քաջութեամբ ճամբանիս առաջ տանելով , կարենանք աւելի լաւ աշխարհ մը հասնելու :

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Պ . ՅՈՎՀԱՆՆԷՍ՝ ԵՍԱՅԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ

ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ :



## Յ Ա Ն Կ Գ Լ Խ Ո Ց



Գ Լ .	Ն .	կորսուած սղայ մը . . . . .	5
Գ Լ .	Բ .	Գիշեր մը . . . . .	12
Գ Լ .	Գ .	Մօր մը սրտմաշուքը . . . . .	15
Գ Լ .	Դ .	Գեղին բնակիչքը . . . . .	24
Գ Լ .	Ն .	Ժողովրդասպեա . . . . .	30
Գ Լ .	Զ .	Գեղջկական կեանք . . . . .	38
Գ Լ .	Է .	Հոգ և ՄխիթարուԹիւն . . . . .	46
Գ Լ .	Ը .	Օտարական զինուորներ . . . . .	56
Գ Լ .	Թ .	Վիրաւորուած սղայ մը . . . . .	61
Գ Լ .	Ժ .	Դատաստան մը . . . . .	71
Գ Լ .	Ժ Ն .	Իրար գանալնին . . . . .	76
Գ Լ .	Ժ Բ .	Վարձք և սրտիժ . . . . .	82
Գ Լ .	Ժ Գ .	Հարիւրապետը . . . . .	91



4822-4827

2013

